ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

Արցախի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի 2020թ. ընտրությունների դիտորդական առաքելության



Երևան, 2020թ.

Սույն հաշվետվությունը ներկայացնում է 2020թ. Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած համապետական ընտրություններին «Ականատես» դիտորդական նախաձեռնության կողմից իրականացված երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության գործընթացն ու արդյունքները: Դիտորդական առաքելությունն իրականացվել է արցախյան «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Արցախի Հանրապետության համապետական ընտրություններում դիտորդական առաքելությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և «Թուֆենկյան» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ՝ «Ականատես» նախաձեռնության անդամ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրված դրամաշնորհների միջոցով:

Սույն հաշվետվության, ինչպես նաև դիտորդական առաքելության շրջանակում հրապարակած այլ նյութերի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» նախաձեռնության անդամ կազմակերպությունները և դրանք չեն արտացոլում դրամաշնորհատուների պաշտոնական տեսակետները:

Դիտորդական առաքելությունն իր երախտիքի խոսքն է ուղղում ընտրությունների դիտարկման գործընթացում ներգրավված դիտորդներին, համակարգողներին և իրավաբաններին, ում ակտիվ մասնակցության և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել դիտորդական նախաձեռնության արդյունավետ և որակյալ աշխատանքը:

«Ականատեսը» նաև շնորհակալություն է հայտնում ԱՀ պետական և տեղական կառավարման մարմիններին, ընտրական հանձնաժողովներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), թեկնածուներին և նրանց նախընտրական շտաբների աշխատակիցներին, իրավապահ մարմիններին, ՄԻՊ-ին, հասարակական կազմակերպություններին, լրատվամիջոցներին և քաղաքացիներին, ովքեր համագործակցել են առաքելության հետ և աջակցել դիտարկման գործընթացում:

ՀՀ կառավարություն

TUFENKIAN

FOUNDATION

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 4
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5
1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9
1.1 Երկարաժամկետ դիտորդություն 9
1.2 Կարճաժամկետ դիտորդություն 10
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 12
3. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 14
3.1. Ընտրական հանձնաժողովներ 14
3.2. Նախընտրական շտաբների գործունեություն 16
3.3. Նախընտրական քարոզչություն 18
3.3.1. Նախընտրական քարոզչություն ՁԼՄ-ներով 20
3.3.2. Քարոզչական նյութերի տարածում 21
3.3.3. Քարոզչություն իրականացնելու իրավունքի սահմանափակումներ 23
3.3.4. Քարոզչություն իրականացնելու կարգ 24
3.3.5. Նախընտրական քարոզչության խոչընդոտում 25
3.3.6. Ատելության խոսք 27
3.3.7. Վարչական ռեսուրսի չարաշահում 28
3.3.8. Ընտրակաշառք և «բարեգործություն» 28
3.4. Նախընտրական քարոզչության ֆինանսավորման խնդիրները 31
3.4.1. Նախընտրական հիմնադրամների ձևավորում և մուտքեր 32
3.4.2. Նախընտրական հիմնադրամների ծախսեր 34
3.4.3. Վերահսկողություն 43
3.5. Քվեարկության օրվա դիտարկում 45
3.6. Հետընտրական գործընթացներ 47
3.7. Դիմումների, բողոքների և հաղորդումների ընթացքը 50
4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 51
Հավելված 1. Ընտրողների մասնակցության և ընտրությունների արդյունքների վիճակագրության վերլուծություն 54

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՀ	Արցախի Հանրապետություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸՕ	Ընտրական օրենսգիրք
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՎՎԾ	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
ՏարԸՀ	Տարածքային ընտրական հանձնաժողով
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՄԴ	Քաղաքացիական միացյալ դաշինք

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2020թ. Արցախի Հանրապետությունում (ԱՀ) տեղի ունեցած նախագահի և Ազգային ժողովի ընտրություններին «Ականատես» դիտորդական նախաձեռնությունը իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն՝ արցախյան «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության (ՀԿ) հետ համագործակցությամբ:

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնադրվել է 2018թ. օգոստոսին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ների, «Ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնության և «Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամի կողմից:

Առաքելության նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը:

Արցախում «Ականատեսի» գործընկեր «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2019թ. օգոստոսին: «Քաղաքացիական հաբի» նպատակը ժողովրդավարության զարգացումն է Արցախում՝ հանրային կառավարման գործընթացներում քաղաքացիական հասարակության դերակատարման բարձրացման միջոցով:

«Ականատեսը» գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կարող են մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ:

«Ականատեսի» կողմից ԱՀ համապետական ընտրությունների դիտարկման նպատակն էր բարձրացնել ընտրական գործընթացների հանդեպ հանրային վստահության մակարդակը, ինչպես նաև աջակցել ԱՀ քաղաքացիական հասարակությանը ազատ և արդար ընտրությունների անցկացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման և ժողովրդավարական ընտրական համակարգի կայացման գործում:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2020թ. մարտի 31-ին տեղի ունեցան Արցախի Հանրապետությունում (ԱՀ) համապետական ընտրություններ, ընդ որում՝ առաջին անգամ ԱՀ ընտրական պատմության մեջ, միաժամանակ անցկացվեցին և՛ նախագահի, և՛ Ազգային ժողովի ընտրություններ:

Համապետական ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն՝ ընտրությունների վերաբերյալ համապարփակ և համակարգված տեղեկատվության հավաքագրման ու անաչառ գնահատականի տրամադրման նպատակով: Առաքելությունը գնահատել է նախընտրական, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների համապատասխանությունը ԱՀ ընտրական օրենսդրությանը և ընտրությունների անցկացման միջազգային չափանիշներին, ինչպես նաև ընտրական գործընթացների հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

Առաքելության 16 երկարաժամկետ դիտորդներ 2020թ.-ի փետրվարի 4-ից մինչև ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում դիտարկել են նախընտրական և հետընտրական գործընթացները ԱՀ ողջ տարածքում:

Մարտի 31-ին՝ համապետական ընտրությունների քվեարկության օրը, գործել է շրջիկ դիտորդների 15 խումբ (30 դիտորդ), որոնք այցելել են 136 ընտրատեղամաս և դիտարկել քվեարկության ընթացքը, ինչպես նաև մասնակցել են արդյունքների ամփոփմանն ու հաշվարկին 31 ընտրատեղամասում: Քվեարկության օրը դիտարկվել են նաև 8 Տարածքային ընտրական հանձնաժողովի (ՏարԸՀ) աշխատանքները: Ի լրումն, առաքելությունն իրականացրել է 48 տեղամասային կենտրոնում քվեարկության գործընթացի ուղիղ հեռարձակման օնլայն վիդեոմոնիտորինգ:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում դիտորդությունն իրականացվել է 4 շրջիկ խմբերի միջոցով (8 դիտորդ), որոնք այցելել են 40 ընտրատեղամաս: Ընտրատեղամասերի օնլայն վիդեոմոնիտորինգում ընդգրկվել են 23 դիտորդ:

ԱՀ համապետական ընտրություններում «Ականատես» դիտորդական առաքելության կողմից վեր հանված խնդիրները ներկայացված են ստորև:

Ընտրական հանձնաժողովներ

Չնայած ընտրական հանձնաժողովների բոլոր 3 մակարդակներում հանձնաժողովների աշխատանքը դիտորդների կողմից գնահատվել է համագործակցային, այդուհանդերձ, հանձնաժողովների աշխատանքներում արձանագրվել են որոշակի խնդիրներ: Կենտրանական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) մակարդակում այդ խնդիրները կապված են ինֆորմացիայի հասանելիության, ի մասնավորի՝ հանձնաժողովի կայքէջի մատչելիության և տեղեկատվության տրամադրման օպերատիվության հետ: ԿԸՀ-ն նաև չի ցուցաբերել բավարար գործառնական վերահսկողություն՝ խախտումները վերացնելու և հետագայում կանխելու նպատակով, իսկ ընտրական հանձնաժողովների անդամների կողմից կատարված խախտումների դեպքերը ԿԸՀ կողմից չեն արժանացել պատշաճ ուսումնասիրման և

պատժամիջոցների կիրառման: ՏարԸՀ մակարդակում առկա են խնդիրներ թափանցիկության, հանձնաժողովի անդամների մասնագիտական հմտությունների և հանձնաժողովների տեխնիկական ապահովվածության առումով: Հարկ է ընդգծել նաև ընտրախախտումներին արձագանքման օպերատիվության խնդիրը ինչպես ԿԸՀ, այնպես էլ ՏարԸՀ մակարդակներում: Տեղամասային ընտրական հանձնաժողովների դեպքում (ՏԸՀ) առկա են դրանց անդամների՝ ընտրական օրենսդրության և իրենց աշխատանքային գործառույթների տիրապետման հետ կապված թերացումներ: Ակնհայտորեն բարելավման կարիք ունի ՏԸՀ անդամների ուսուցման գործընթացը:

Նախընտրական շտաբներ

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև թեկնածուների ընտրական շտաբները գործել են ոչ թափանցիկ, ինչը, հիմնականում, պայմանավորված է ինչպես օրենսդրական թերացումներով, այնպես էլ քաղաքական ուժերի պատասխանատվության ու հաշվետվողականության պակասով: Նախընտրական շտաբների աշխատակիցները, երբեմն, զգուշավոր են եղել դիտորդների նկատմամբ և խուսափել կամ հրաժարվել են տրամադրել բանավոր տեղեկություններ շտաբների տարածքների, աշխատողների և կամավորների քանակի վերաբերյալ, իսկ առաքելության կողմից շտաբներին ուղղված գրավոր հարցումները, մեծ մասամբ, անտեսվել են շտաբների կողմից:

Նախընտրական քարոզչություն

ԱՀ համապետական ընտրությունների նախընտրական արշավն, ընդհանուր առմամբ, անցել է մրցակցային մթնոլորտում և ավելի է թեժացել քվեարկության օրվան մոտենալով: Որոշ թեկնածուներ միմյանց հասցեին հնչեցրել են սուր քննադատություն, որոշները հանդես են եկել խիստ ընդդիմադիր դիրքերից, սակայն, ընդհանուր առմամբ, նախագահի թեկնածուներից և ընտրությունների մասնակից կուսակցություններից շատերը չեն ունեցել որևէ ընդգծված գաղափարախոսություն:

Թեև ընտրական գործընթացներում նախկինի համեմատ գրանցվել են որոշակի դրական փոփոխություններ, այնուամենայնիվ, ընտրությունների մեկնարկը չի կարելի համարել արդար:

Ընտրական գործընթացի մասնակիցներից շատերի կարծիքով ընտրողների նկատմամբ իշխանությունների կողմից քողարկված կամ անթաքույց կերպով լայնածավալ ճնշում է իրականացվել: Կիրառվել են ձայների գնման որոշ մեխանիզմներ, մասնավորապես՝ տրվել են բարեգործության խոստումներ՝ ինչպես անհատական, այնպես էլ համայնքային մակարդակներում (այդ թվում՝ երրորդ անձանց կողմից), որոնք ակնհայտ մրցակցային առավելություն են տվել ընտրություններին մասնակցող կոնկրետ թեկնածուին:

Առաքելության դիտորդներն արձանագրել են քարոզչական նյութերի տարածման կանոնների բազմաթիվ խախտումներ: Արձանագրվել է քարոզչական նյութերի փակցման կարգի խախտումների ավելի քան 230 դեպք ինչպես Ստեփանակերտում, այնպես էլ՝ բոլոր

շրջաններում:[1] Միևնույն ժամանակ, արձանագրվել է շուրջ 22 դեպք, երբ թեկնածուների և կուսակցությունների կողմից խախտվել են քարոզչական տպագիր նյութերին ներկայացվող պահանջները:

Ընտրական հանձնաժողովի անդամների կողմից քարոզչության երկու դեպք է արձանագրվել Մարտունու շրջանում: Նույն շրջանում տեղի է ունեցել այլ էական խախտումներ, մասնավորապես՝ արձանագրվել են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից քաղաքական ուժի քարոզչության իրավունքի խոչընդոտման դեպքեր:

Մտահոգիչ է նաև նույն քաղաքական ուժի (Արցախի հեղափոխական կուսակցություն) խաղաղ բողոքի ակցիայի և ավտոերթի տեսքով իրազեկման ակցիայի իրավունքի խոչընդոտումը ԱՀ ոստիկանության կողմից, ինչպես նաև հավաքի մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառումը:

«Ականատեսի» դիտորդներն արձանագրել են դեպքեր, երբ նախագահի թեկնածուները և կուսակցությունները կազմակերպել են հանդիպումներ հանրային ծառայողների հետ աշխատանքային ժամերին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող կառույցներում:

Չնայած նախընտրական քարոզչությունը հիմնականում զերծ է եղել բռնության, սպառնալիքի և ատելության կոչերից, որոշ դրվագներում, սակայն թեկնածուները և նրանց ներկայացուցիչները հանդես են եկել ոչ պատշաճ խոսույթով և թիրախավորել մրցակիցների անձը՝ հետին պլանում թողնելով թեկնածուների և կուսակցությունների նախընտրական ծրագրերն ու դրանց շուրջ քննարկումները:

Քարոզարշավի վերջին օրն Արցախի Հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում կազմակերպվել է հեռուստաբանավեճ՝ նախագահի 12 թեկնածուների մասնակցությամբ: Թեև բանավեճի իրականացման փաստն ինքնին ողջունելի է, քանի որ հեռուստաբանավեճերը մեծապես նպաստում են ընտրողների կողմից ավելի գիտակից ընտրության կայացմանը, սակայն կարծում ենք, որ կայացած հեռուստաբանավեճի ձևաչափը՝ երբ միաժամանակ մասնակցում են մեծ թվով թեկնածուներ, որի պատճառով ժամանակը չի բավականացնում ներկայացվող թեզերը պաշտպանելու և բանավիճելու համար, թույլ չտվեց թեկնածուներին լիարժեքորեն ներկայացնել և պաշտպանել սեփական մոտեցումները, ծրագրային դրույթները և, ըստ էության, ընտրողները գաղափարական բանավեճի ականատես չեղան:

ԱՀ համապետական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում և քվեարկության օրը իրավապահ մարմինների կողմից դիմում-բողոքների, ահազանգերի և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների հիման վրա քննության է առնվել հանցագործության և այլ իրավախախտումների վերաբերյալ ընդհանուր 78 հաղորդում:

[1] https://drive.google.com/file/d/1L4HpJ23crp1eUWHENpmnWfQyi8LLYgqu/view?fbclid=IwAR2VHNx3ixC2hT_Q0XNckq7nQcE_7d0r7HltZjGZNVCPXUoxOOO7155uhzI

Նախընտրական քարոզչության ֆինանսավորում

Դիտորդության արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ՝ կապված ընտրությունների ֆինանսավորման իրավական կարգավորումների և կառուցակարգերի հետ: Առաջնային կարգով խնդրահարույց է որ ոչ բոլոր հնարավոր ծախսերն են ենթակա հայտարարագրման: Մասնավորապես՝ հայտարարագրման պահանջ առկա չէ նախընտրական ծախսերի մի ստվար հատվածի դեպքում, օրինակ՝ ընտրական շտաբների վարձակալության, պահպանման ծախսեր, աշխատակիցների վարձատրության և այլն: Հայտարարագրման առնչությամբ առկա են նաև այլ խնդիրներ, որոնք կապված են ապրանքների և ծառայությունների մեկ միասնական դասակարգման ցանկի բացակայության հետ, ոչ ֆինանսական նվիրատվությունների գնահատման մեթոդաբանության բացակայության հետ: Ամենից առանցքային խնդիրը կարգավորող մարմնի՝ ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (ՎՎԾ) բարեփոխման անհրաժեշտությունն է՝ արդյունավետության և ինստիտուցիոնալ անկախության ապահովման տեսանկյունից: Պակաս կարևոր չէ նաև պատասխանատվության իրավական կարգավորման դաշտի շրջանակի ընդլայնումը և դրա համապատասխանեցումը արդյունավետ վերահսկողության և իրավախախտումների կանխարգելման պահանջներին:

Քվեարկության օրվա դիտարկում

«Ականատես» դիտորդական առաքելության գնահատմամբ՝ 2020թ. մարտի 31-ին Արցախի Հանրապետությունում կայացած նախագահական և խորհրդարանական ընտրությունների քվեարկությունն ընթացել է մասամբ լարված մթնոլորտում: Գրանցվել է ընտրողների մասնակցության բավականին բարձր՝ շուրջ 73% ցուցանիշ: Բազմաթիվ տարերային խախտումների հետ միաժամանակ տեղ են գտել մի շարք կրկնվող երևույթներ, որոնք հիմք են տալիս ենթադրել, որ դրանք եղել են միտումնավոր և կազմակերպված: Մասնավորապես, ցրված կամ դրվագային խախտումների համատեքստում համեմատաբար ավելի արտառոց և ուշագրավ է եղել ընտրողների կողմից քվեարկած քվեաթերթիկները լուսանկարելու երևույթը, որոնց մեծամասնությունը, ինչպես պարզվել է դիտարկման արդյունքում, քվեարկած են եղել Արայիկ Հարությունյանի կամ «Ազատ հայրենիք» կուսակցության օգտին:

Ակնհայտորեն որոշ ընտրողների կամարտահայտումը չի եղել ազատ, վերահսկվել է, ինչը կարող էր ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Ընտրողների մասնակցության և ընտրությունների արդյունքների վիճակագրության վերլուծություն

ԱՀ համապետական ընտրությունների քվեարկության և արդյունքների բաց տվյալների վերլուծությունը (Հավելված 1.) ցույց է տալիս, որ ընտրողների մասնակցության և թեկնածուների ու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստացած ձայների միջև առկա է նշանակալի դրական կորելացիա, ինչը պայմանավորված է արտաքին գործոններով: Թե՛ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների), և թե՛ նախագահի թեկնածուների պարագայում, հատկապես առաջին փուլում, նկատվել են որոշակի անոմալիաներ, որոնք կարող էին ենթադրել արհեստական միջամտություն՝ բարձր մասնակցություն և ձայների անհրաժեշտ քանակ ապահովելու նպատակով: «Ականատես» դիտորդական առաքելության կողմից Արցախի 2020թ. համապետական ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկման բացահայտումները թույլ են տալիս

ենթադրել, որ նկատված անոմալիաները կարող էին լինել «բարեգործության» անվան տակ ընտրողների կաշառման, ուղղորդման և քվեարկության վերահսկողության հետևանք:

Հետընտրական գործընթացներ

Չնայած ընտրությունների որակի և արդյունքների արժանահավատության վերաբերյալ մամուլում հնչեցրած բազում դժգոհություններին, թեկնածուներից և կուսակցություններից որևէ մեկը չի բողոքարկել մարտի 31-ին կայացած ընտրությունների արդյունքները, չեն ներկայացվել դրանք անվավեր ճանաչելու կամ վերահաշվարկի դիմումներ:

Նախագահի որևէ թեկնածուի կողմից ընտրողների 50%+1 ձայն չհավաքելու արդյունքում 2020թ. ապրիլի 14-ին, առաջին անգամ ԱՀ ընտրական պատմության ընթացքում, անցկացվել է նախագահի ընտրության երկրորդ փուլ՝ առաջին փուլում առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների՝ Արայիկ Հարությունյանի և Մասիս Մայիլյանի մասնակցությամբ: Երկրորդ փուլին ընդհառաջ, սակայն, թեկնածուները չեն իրականացրել նախընտրական քարոզչություն՝ դրանով իսկ ակնհայտորեն ոչ մրցակցային դարձնելով նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Ավելին, նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանը փաստացի բոյկոտել է ընտրությունների երկրորդ փուլը և կոչ արել ընտրողներին կորոնավիրուսի համավարակի՝ գնալով ահագնացող վտանգի պայմաններում չմասնակցել երկրորդ փուլի քվեարկությանը: Երկրորդ փուլի ընտրությունները տեղի են ունեցել ԱՀ-ում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ արգելված էին զանգվածային միջոցառումները, որի պատճառով, օրինակ, ընտրություններից հետո հանրությունը զրկվել էր ընտրությունների վերաբերյալ իր դիրքորոշումը որևէ հրապարակային ակցիայի միջոցով հայտնելու հնարավորությունից:

1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՀ համապետական ընտրություններին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն՝ ընտրությունների վերաբերյալ համապարփակ և համակարգված տեղեկատվության հավաքագրումն ու անաչառ գնահատականն ապահովելու նպատակով: Առաքելությունը գնահատել է նախընտրական, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների համապատասխանությունը ԱՀ ընտրական օրենսդրությանը և ընտրությունների անցկացման միջազգային չափանիշներին, ինչպես նաև ընտրական գործընթացների հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

1.1 Երկարաժամկետ դիտորդություն

«Ականատես» դիտորդական առաքելության 16 երկարաժամկետ դիտորդներ 2020թ.-ի փետրվարի 4-ից մինչև ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում դիտարկել են նախընտրական և հետընտրական գործընթացները ԱՀ մայրաքաղաք Ստեփանակերտը և բոլոր շրջաններն ընդգրկող 8 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում:

Նախընտրական ժամանակահատվածում դիտորդներն ուսումնասիրել են ընտրությունների վարչարարությունը, ընտրական հանձնաժողովների գործողությունների համապատասխանությունը ԿԸՀ կողմից սահմանված ժամանակացույցին, թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, նախընտրական քարոզչության ֆինանսավորումը, վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերը, ընտրական գործընթացների այլ մասնակիցների (իրավապահ մարմիններ, ՏԻՄ և այլն) աշխատանքը, ինչպես նաև ընտրական գործընթացների ընդհանուր մթնոլորտը: Դիտորդները տեղերում աշխատել են ընտրական հանձնաժողովների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների նախընտրական շտաբների, համայնքապետարանների, իրավապահ կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՁԼՄ ներկայացուցիչների հետ:

Տվյալների հավաքագրումը կատարվել է գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Անուղղակիորեն ստացված տեղեկությունների ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով դրանք ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Նախընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով «Ականատեսի» դիտորդներն ունեցել են 66 այցելություն տարածքային և 50 այցելություն տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Երկարաժամկետ դիտորդները հետևել են տեղամասային հանձնաժողովների ուսուցման նպատակով ԿԸՀ կողմից կազմակերպված 15 դասընթացի: Կատարվել է 364 այցելություն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների գրասենյակներ և նախընտրական շտաբներ, 19 հանդիպում ոստիկանության ներկայացուցիչների հետ: Դիտորդները մասնակցել են 120 նախընտրական միջոցառումների/հանդիպումների և այցելել են ավելի քան 131 համայնք: Ի լրումն, տեղի են ունեցել հանդիպումներ 1833 քաղաքացիների հետ:

Հետընտրական ժամանակահատվածում դիտորդները դիտարկել են տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը և հետընտրական քաղաքական գործընթացները:

1.2 Կարճաժամկետ դիտորդություն

Առաքելությունն, ի սկզբանե, ծրագրել էր ԱՀ համապետական ընտրությունների քվեարկության օրվա կարճաժամկետ դիտորդությունն իրականացնել զգալի ծավալով և բովանդակությամբ: Նախատեսվում էր իրականացնել ընտրանքի վրա հիմնված դիտորդություն (sample-based observation-SBO) 60 ընտրատեղամասում, ինչպես նաև շրջիկ դիտորդների և տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը դիտարկող խմբերի տեղաբաշխում: Այս նպատակով ԱՀ ԿԸՀ-ում հավատարմագրվել է բաց մրցույթով ընտրված 100 միջազգային դիտորդ՝ նախաձեռնության անդամներից մեկի՝ ԹԻՀԿ-ի անունով և 106 տեղական դիտորդ, որոնք ներկայացրել են արցախյան «Քաղաքացիական հաբ» ՀԿ-ն:

Հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի տարածման կանխարգելման նպատակով արտակարգ դրության սահմանումը ՀՀ-ում և համաճարակային ռիսկերը ԱՀ-ում՝ «Ականատես» նախաձեռնությունը վերակազմակերպել է կարճաժամկետ դիտորդական առաքելությունը և Արցախում հանդես եկել զգալիորեն փոքր խմբով: Արդյունքում, մարտի 31-ին՝ համապետական ընտրությունների քվեարկության օրը, գործել է շրջիկ դիտորդների 15 խումբ (30 դիտորդ), որոնք այցելել են 136 ընտրատեղամաս և դիտարկել քվեարկության ընթացքը, ինչպես նաև մասնակցել են արդյունքների ամփոփմանն ու հաշվարկին 31 ընտրատեղամասում: Եվս 8 դիտորդ հետևել են տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքին, մասնավորապես՝ տեղամասերից պարկերի ստացման, արդյունքների աղյուսակավորման և այլ գործընթացներին:

Հարկ է նշել, որ ի լրումն վերոնշյալի, առաքելությունը ստացել է ահազանգեր քաղաքացիներից և կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչներից ընթացիկ ընտրախախտումների վերաբերյալ և փորձել հետամուտ լինել դրանց ճշգրտմանը:

Տեղամասային դիտորդությունը փոխարինվել է հեռահար դիտորդությամբ, որի շրջանակում առաքելության 24 դիտորդ իրականացրել է 48 տեղամասային կենտրոններում քվեարկության գործընթացի ուղիղ հեռարձակման օնլայն դիտարկում:

Քվեարկության օրը դիտորդական առաքելության համակարգման, իրավական խորհրդատվության և վերհանված խախտումների արձանագրման նպատակով հեռահար կերպով գործել է համակարգող կենտրոն, որում ներգրավվել են 3 իրավաբան և 10 համակարգող:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում դիտորդությունն իրականացվել է 4 շրջիկ խմբերի միջոցով (8 դիտորդ), որոնք այցելել են 40 ընտրատեղամաս: Շրջիկ խմբերը դիտարկել են իրավիճակը ընտրատեղամասերի ներսում և հարակից տարածքներում, ինչպես նաև՝ համայնքներում և թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական շտաբների մոտակայքում: Ընտրատեղամասերի օնլայն դիտարկման գործընթացում ընդգրկվել է 23 դիտորդ:

Երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության ընթացքում դիտորդների կողմից հավաքագրված քանակական և որակական, ինչպես նաև ընտրությունների վերաբերյալ առկա բաց տվյալները ենթարկվել են վերլուծության և ամփոփվել «Ականատես» դիտորդական առաքելության միջանկյալ տեղեկանքներում[2] և հայտարարություններում:[3]

Ընտրական գործընթացում արձանագրված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են դիմում-բողոքներ:

Դիտորդության վերաբերյալ ընթացիկ տեղեկատվությունը հրապարակվել է «Ականատես» դիտորդական առաքելության ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև անդամ

[2] https://transparency.am/hy/news/view/3031, https://transparency.am/hy/news/view/3036, https://transparency.am/files/publications/1586936710-0-925397.pdf?v=4
[3] https://transparency.am/hy/news/view/3035

կազմակերպությունների ինտերնետային կայքէջերում և/կամ ֆեյսբուքյան էջերում, տարածվել ՁԼՄ-ների և գործընկեր կազմակերպությունների շրջանակներում:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. մարտի 31-ին տեղի ունեցան ԱՀ համապետական ընտրություններ, ընդ որում, առաջին անգամ ԱՀ ընտրական պատմության մեջ, միաժամանակ անց են կացվել և՛ նախագահի, և՛ Ազգային ժողովի ընտրություններ: Ընտրությունների անց են կացվել ԱՀ Սահմանադրության, նոր ընտրական օրենսգրքի (ԸՕ)[4] և «Կուսակցությունների մասին» նոր օրենքի[5] կարգավորումների համաձայն: 2020թ. հունվարի 20-ին ԱՀ ԿԸՀ-ն հանդես է եկել 2020թ. մարտի 31-ին ԱՀ նախագահի և Ազգային ժողովի ընտրություններ անցկացնելու վերաբերյալ հաղորդագրությամբ: ԱՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ թեկնածուների գրանցումը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցումը կատարվել է 2020թ. փետրվարի 15-ից մինչև 25-ը:[6]

Ազգային ժողովի ընտրություններին մասնակցել են 10 կուսակցություն և կուսակցությունների 2 դաշինք, որոնցից մեկում միավորված է եղել 2, մյուսում՝ 3 կուսակցություն: Նշված 15 կուսակցությունից 10-ը նորաստեղծ է՝ հիմնադրված ընտրություններին նախորդող երկու տարիների ընթացքում:

Պատկեր 1.



Ընտրությունների արդյունքում համամասնական ընտրակարգով ձևավորված ԱՀ յոթերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված կլինեն 4 կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինք, որոնք, համապատասխանաբար, հաղթահարել են անցողիկ 5% և 7% շեմերը: Այդ քաղաքական ուժերին ԱԺ-ում կներկայացնի 33 պատգամավոր:

[4] Ընդունված 2019թ. հուլիսին, ուժի մեջ մտած 2020թ. հունվարին
[5] Ընդունված 2019թ. հուլիսին, ուժի մեջ մտած 2019թ. սեպտեմբերին
[6] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 98, մաս 2 և հոդված 121

Ազգային ժողովի պատգամավորական մանդատների բաշխումը ներկայացված է Պատկեր 2-ում:[7]

Պատկեր 2.

Հանրապետության նախագահի ընտրապայքարին մասնակցել է 14 թեկնածու, ընդ որում, որոնցից 2-ը՝ կին: Հանրապետության նախագահի թեկնածուներից 8-ն առաջադրվել են կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից, 6-ը՝ ինքնաառաջադրվել են:

Պատկեր 3.

[7] Պատկերը՝ Ազատություն TV-ի

Նախագահական ընտրությունների առաջին փուլում որևէ թեկնածուի կողմից ընտրողների 50%+1 ձայն չհավաքելու արդյունքում 2020թ. ապրիլի 14-ին, առաջին անգամ ԱՀ ընտրական պատմության ընթացքում, անցկացվել է նախագահի ընտրության երկրորդ փուլ՝ առաջին փուլում առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների մասնակցությամբ:

Ընտրություններին մասնակցելու իրավունք ուներ ԱՀ 104,748 ընտրող: Մարտի 31-ի համապետական ընտրություններում քվեարկությանը մասնակցել է ընտրողների 72.7%-ը, իսկ ապրիլի 14-ին կայացած նախագահական ընտրությունների երկրորդ փուլում գրանցվել է ընտրողների 44.9% մասնակցություն:

Ընտրական համակարգը ԱՀ-ում եռաստիճան է: Ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու են Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) և 8 Տարածքային ընտրական հանձնաժողովները (ՏարԸՀ): Քվեարկությունն անց է կացվել ձևավորված 282 ընտրական տեղամասում (որոնցից մեկը՝ Երևանում)՝ Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) 2,027 անդամի ներգրավմամբ:

Ընտրությունների ընթացքին հետևելու նպատակով ԱՀ ԿԸՀ-ում հավատարմագրվել են 19 դիտորդական կազմակերպությունների 949 դիտորդ և 49 ՁԼՄ-ի 233 ներկայացուցիչ:

3. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ստորև ներկայացվում են «Ականատես» դիտորդական առաքելության դիտարկումների արդյունքները, որոնք վերաբերում են ընտրական հանձնաժողովների աշխատանքին, նախընտրական քարոզչությանը, նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը, համապետական ընտրությունների քվեարկությանը, նախագահական ընտրությունների երկրորդ փուլի ընթացքին և հետընտրական գործընթացներին:

3.1. Ընտրական հանձնաժողովներ

Ընտրական հանձնաժողովների բոլոր երեք մակարդակներում արձանագրվել են որոշ խնդիրներ, ինչպիսիք են թափանցիկության, մասնագիտական հմտությունների, տեխնիկական ապահովվածության, խախտումներին արձագանքման օպերատիվության և այլ հարցերը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

2020թ. հունվարի 21-ին ԱՀ ԿԸՀ-ն հաստատել է ընտրությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումների ժամանակացույցը: Ըստ դիտարկումների, ընդհանուր առմամբ, ընտրությունների կազմակերպման հետ կապված աշխատանքներն ընթացել են օրենքով սահմանված ժամանակացույցի համաձայն և ԱՀ ԿԸՀ-ն, հիմնականում, գործել է արհեստավարժ և պատասխանատու կերպով: Ընտրությունների ողջ ընթացքում առաքելության հետ համագործակցությունը եղել է կառուցողական և բարյացակամ:

«Ականատեսի» դիտարկումների համաձայն՝ ԱՀ ԿԸՀ կայքը դժվարամատչելի է և չի ապահովում ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկությունների բավարար հասանելիություն և թափանցիկություն: Մասնավորապես, բացակայում է ԿԸՀ որոշ նիստերի

որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը (օրինակ՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված ԱՀ ընտրական հանձնաժողովների ծախսերի նախահաշիվը), դժվարամատչելի է տարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերի հասցեների, ինչպես նաև դրանց սպասարկման տարածքների մասին տեղեկատվությունը: Կարևորագույն տեղեկատվությունը հաճախ ներկայացված է միայն ԿԸՀ որոշումներում, ինչը, հաշվի առնելով կայքի որոնողական գործառույթի անբավարար աշխատանքը, դժվարացնում է տեղեկատվության որոնումը: ԿԸՀ կայքում հրապարակվող տեղեկատվության զգալի մասը ներկայացվում է PDF ձևաչափով (օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմը, գույքի և եկամուտների հայտարարագրերը և այլն), ինչը թույլ չի տալիս համակարգչին «կարդալ» (machine-readable data/format) և վերլուծել տվյալները՝ անհարկի խոչընդոտներ առաջացնելով արդյունավետ հանրային վերահսկողության համար:

Տարածքային ընտրական հանձնաժողովներ

Համապետական ընտրությունների կազմակերպման նպատակով ձևավորվել է 8 տարածքային ընտրական հանձնաժողով, որոնցից 1-ը՝ Ստեփանակերտում, 7-ը՝ շրջաններում: Դիտարկման ժամանակահատվածում դիտորդների կողմից իրականացվել է 66 այցելություն ՏարԸՀ-ներ: Դրանց աշխատանքների առնչությամբ էական խնդիրներ չեն արձանագրվել: Հանձնաժողովները, երբեմն ուշացումներով, սակայն հիմնականում դիտորդներին տրամադրել են նիստերի անցկացման վերաբերյալ հայցվող տեղեկատվությունը և դրանց արձանագրությունները: Դիտորդների աշխատանքի և իրավունքների խոչընդոտման դեպքեր չեն գրանցվել, և նրանք, մեծ մասամբ, համագործակցային են գնահատել հանձնաժողովների աշխատանքը:

Այդուհանդերձ, ՏարԸՀ-ների գործունեության հետ կապված վեր են հանվել մի շարք խնդիրներ:

Տարածքային հանձնաժողովների գործունեությունը գնահատվել է ոչ թափանցիկ, քանի որ դրա վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ ԿԸՀ կայքում, իսկ նիստերի արձանագրությունները հավաքագրելու նպատակով դիտորդները ստիպված են եղել ֆիզիկապես այցելել այդ հանձնաժողովների գրասենյակներ: Մի շարք դեպքերում տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներից ոչ բոլորն են ներկա եղել հանձնաժողովի գրասենյակներում: Տարածքային ընտրական հանձնաժողովները ոչ պատշաճ են կատարել նաև իրենց գործառույթները տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո՝ խախտելով քվեարկության արդյունքների աղյուսակավորման, թվաբանական սխալները ուղղելու և տեղամասային ընտրական հանձնաժողովներից ընտրական փաստաթղթերը և այլ պարագաները ընդունելու ընթացակարգային պահանջները: Տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեությունը խնդրահարույց է նաև՝ պայմանավորված պատշաճ աշխատանքի համար անհրաժեշտ միջոցների և գործիքների բացակայությամբ, ինչպես նաև հանձնաժողովների անդամների գիտելիքների և գործնական կարողությունների սահմանափակումներով: Այս հանձնաժողովները զրկված են ժամանակակից տեխնիկական պայմաններից ու միջոցներից, որոնք կկարողանային ապահովել առավել արդյունավետ ու թափանցիկ աշխատանք և էականորեն կխթանեին հանձնաժողովի անդամների առավել պրոֆեսիոնալ ու արժանապատիվ աշխատանքը:

Արձանագրված խնդիրներից հարկ է առանձնացնել նաև կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական օրենսգրքի խախտումների պատշաճ և հետևողական վերլուծության բացակայությունը, խախտում իրականացրած անձանց՝ հատկապես ընտրական հանձնաժողովի անդամներին պատասխանատվության ենթարկելու համար ձեռնարկված միջոցների խիստ անբավարարությունը:

Ընտրական գործընթացում արձանագրված էական խախտումների հիման վրա առաքելության կողմից ներկայացվել է երկու դիմում ՏարԸՀ-ներին՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածի և երեք դիմում՝ քվեարկության օրվա խախտումների վերաբերյալ, սակայն դիմում-բողոքների հիման վրա վարչական վարույթներ չեն հարուցվել և խախտում կատարած անձինք որևէ պատասխանատվության չեն ենթարկվել վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից: Մեկ ՏարԸՀ-ի գործողությունները երկու անգամ բողոքարկվել են ԿԸՀ, որի վերաբերյալ սակայն որևէ որոշում չի կայացվել:

Դիմում-բողոքների մասին ավելի մանրամասն նկարագրություն առկա է սույն զեկույցի 3.7 բաժնում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

ՏԸՀ անդամների աշխատանքը ևս դիտորդների կողմից գնահատվել է համագործակցային, սակայն կրկին արձանագրվել են մի շարք խնդիրներ:

ԿԸՀ կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար կազմակերպված դասընթացներին մասնակցել են այդ հանձնաժողովների մի քանի հարյուր անդամներ: Դիտորդները դրական են գնահատել դասընթացների կազմակերպվածությունն ու որակը, այնուամենայնիվ, խնդրահարույց են համարվել դասընթացի ավարտին կազմակերպված ստուգարքները: Վերջինները կազմակերպվել են բանավոր կարգով՝ նախօրոք պատրաստված քննական տոմսերի հարցերին պատասխանելու միջոցով, իսկ որոշ դեպքերում դրանք կրել են զրույցների բնույթ: Նման ձևաչափով ստուգարքի պարագայում հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել տեղամասային հանձնաժողովի անդամների գիտելիքների վերաբերյալ կամ ապահովել անկողմնակալ մոտեցում և օբյեկտիվ գնահատական:

Քվեարկության նախօրեին դիտորդները դիտարկել են ՏԸՀ կողմից իրականացվող՝ քվեարկության սենյակների կահավորման, քվեաթերթիկների ստորագրման և այլ գործընթացները, որոնց հետ կապված էական խնդիրներ չեն արձանագրվել: Բազմաթիվ տեղամասերում նկատվել է սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող անձանց համար տեղամասային կենտրոնների դժվարամատչելիության խնդիր: Կրկին արձանագրվել են ՏԸՀ անդամների՝ ընտրական օրենսդրության և իրենց աշխատանքային գործառույթների տիրապետման հետ կապված թերացումներ:

3.2. Նախընտրական շտաբների գործունեություն

ԱՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրական շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին

չպատկանող տարածք), հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերում, ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները:[8] Դիտարկված ընտրական շտաբների տեղակայումը համապատասխանել է օրենսգրքով նախատեսված սահմանափակումներին:

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև թեկնածուների ընտրական շտաբները գործել են ոչ թափանցիկ, ինչը, հիմնականում, պայմանավորված է ինչպես օրենսդրական թերացումներով, այնպես էլ քաղաքական ուժերի պատասխանատվության ու հաշվետվողականության պակասով:

«Ականատես» դիտորդական առաքելության փորձագետների թիմը ընտրապայքարին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների, Արցախի հանրային հեռուստաընկերության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ փորձագետների հետ ունեցել է հանդիպում-քննարկումներ ընտրական գործընթացի վերաբերյալ վերջիններիս գնահատականներին ծանոթանալու համար:

Առաքելության կողմից բազմաթիվ գրավոր հարցումներ են հղվել թեկնածուներին և կուսակցություններին: Հարցումների միջոցով առաքելությունը փորձել է տեղեկություններ ստանալ կուսակցությունների ֆինանսական միջոցների և գույքի, նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման աղբյուրների, նախընտրական միջոցառումների, նախընտրական շտաբների քանակի և դրանց տեղակայման, շտաբներում ընդգրկված աշխատակիցների քանակի և այլ հարցերի վերաբերյալ: Սակայն քաղաքական ուժերի մեծամասնությունը ցուցաբերել է ոչ համագործակցային վարքագիծ և չի արձագանքել հարցումներին: Որոշ դեպքերում պատասխանները եղել են ոչ լիարժեք, չեն հարգվել պատասխանի ակնկալվող ժամկետները կամ ստացվել են բանավոր և թերի պատասխաններ: Ավելի մանրամասն՝ Պատկեր 4-ում:

Պատկեր 4.

[8] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 4

Նախընտրական շտաբների աշխատակիցները, երբեմն, զգուշավոր են եղել դիտորդների նկատմամբ և խուսափել կամ հրաժարվել տրամադրել տեղեկություններ շտաբների տարածքների, աշխատողների և կամավորների քանակի վերաբերյալ: Մասնավորապես՝ դիտորդները տեղեկատվության ստացման խնդիրներ են ունեցել նախագահի թեկնածու Վիտալի Բալասանյանի՝ Ստեփանակերտում տեղակայված նախընտրական շտաբի և «Ազատ հայրենիք - ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի՝ Ասկերանի շրջանում և Քարվաճառում տեղակայված նախընտրական շտաբների հետ:

Հարկ է նշել, որ ընտրապայքարի որոշ մասնակիցների մոտ նկատվել է թյուրընկալում դիտորդական առաքելությունների իրական նպատակի և խնդիրների վերաբերյալ: Մասնավորապես, նրանց մի մասը դիտորդական առաքելությունը դիտարկել է որպես «խախտումները վերացնող և խախտողներին պատասխանատվության ենթարկող», ազատ և արդար ընտրությունների անցկացման համար «պատասխանատու» դերակատար: Այնինչ՝ ժողովրդավարական համակարգում դիտորդների դերն անկողմնակալ դիտարկումների միջոցով ընտրություններն ավելի թափանցիկ ու հրապարակային դարձնելը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողության մշակույթի ձևավորումն է:

3.3. Նախընտրական քարոզչություն

Համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքի՝ համապետական ընտրությունների նախընտրական քարոզչությունը սկսվել է փետրվարի 26-ին՝ ԱՀ նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը: Այն տևել է 33 օր՝ մինչև 2020 թվականի մարտի 29-ը, ժամը 24:00-ն:[9]

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն այն ժամանակն է, որի ընթացքում ԱՀ նախագահի թեկնածուներին, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ օրենսգրքով սահմանված կանոնները:[10] Հարկ է նշել, որ այս ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը և չի կարգավորում քարոզչության իրականացման կարգը: Այս բացը, ինչպես ներկայացվում է ստորև, գործնականում ընտրապայքարի մասնակից կողմերի համար կարող է ստեղծել անհավասար պայմաններ և խաթարել արդար մրցակցությունը:

ԱՀ համապետական ընտրությունների նախընտրական արշավն, ընդհանուր առմամբ, անցել է մրցակցային մթնոլորտում և ավելի է թեժացել քվեարկության օրվան մոտենալով: Որոշ թեկնածուներ միմյանց հասցեին հնչեցրել են սուր քննադատություն, որոշները հանդես են եկել խիստ ընդդիմադիր դիրքերից: Շատերը հայտարարել են, որ պայքարում են Արցախում համակարգային փոփոխությունների հասնելու համար:

Թեև որոշ թեկնածուներ հայտարարել են իրենց գաղափարախոսական հենքի մասին, սակայն նախագահի թեկնածուներից և ընտրությունների մասնակից կուսակցություններից

[9] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 1
[10] Նույն տեղում

շատերը չեն ունեցել որևէ ընդգծված գաղափարախոսություն: Շատերի ծրագրային դրույթները չափազանց նման են եղել մեկը մյուսին և սահմանափակվել ընդհանուր բնույթի գաղափարներով:

Ընտրական գործընթացի մասնակիցներից որոշների կարծիքով ընտրողների նկատմամբ իշխանությունների կողմից քողարկված կամ անթաքույց կերպով լայնածավալ ճնշում է իրականացվել: Թեկնածուներից ոմանք նշել են, որ թեև ընտրական գործընթացներում նախկինի համեմատ գրանցվել են որոշակի դրական փոփոխություններ, այնուամենայնիվ, ընտրությունների մեկնարկը չի կարելի համարել արդար, քանի որ թեկնածուներից մեկը՝ Արայիկ Հարությունյանը, տիրապետելով վարչական, ինչպես նաև գործարար ու ֆինանսական ռեսուրսների, ուղղակի կամ անուղղակի կերպով «ձայներ է գնել» և ազդել ընտրողների ազատ կամարտահայտման վրա: Շատերը նշել են, որ «ձայների գնման» ու ընտրողների վրա ճնշման մեխանիզմները ժամանակի ընթացքում կատարելագործվել են՝ դառնալով նվազ ակնհայտ:

Թեկնածուների մեծ մասը քարոզարշավը հիմնականում իրականացրել է համեմատաբար փոքրաթիվ մարդկանց խմբերի հետ հանդիպումների ձևաչափով, ինչպես դահլիճներում, այնպես էլ՝ բացօթյա տարածքներում: Քարոզչությունն իրականացվել է նաև ավտոերթերի, քայլերթերի, համերգների և այլ միջոցառումների տեսքով: Հարկ է նկատել, որ ոչ միշտ են նախընտրական միջոցառումների անցկացման վայրերը հասանելի եղել հաշմանդամություն կամ տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողների համար:

Կորոնավիրուսի COVID-19 համավարակի խնդրով պայմանավորված՝ քարոզարշավի վերջին փուլում թեկնածուներն իրենց հանդիպումները կազմակերպել են հիմնականում բացօթյա հանդիպումների ձևաչափով: Նախընտրական քարոզչության վերջում համավարակի տարածման վտանգից ելնելով՝ թեկնածուներից շատերն էլ ավելի են սահմանափակել իրենց քարոզչությունը: Հարկ է նշել նաև, որ ընտրությունների նախաշեմին ընդդիմադիր 5 թեկնածուներ համատեղ հայտարարություն են տարածել[11] ՝ կոչ անելով իշխանություններին երկրում արտակարգ դրություն հայտարարել և հետաձգել ընտրությունները: Նմանատիպ, սակայն առանձին կոչով է հանդես եկել նաև նախագահի թեկնածու Վիտալի Բալասանյանը: Ընտրությունները հետաձգելուն ուղղված հորդորներն ու կոչերը ինչպե՛ս Արցախում, այնպե՛ս էլ Հայաստանում անտեսվել են Արցախի իշխանությունների կողմից:

Համավարակի ռիսկը, ինքնին, մրցակից քաղաքական ուժերի ու թեկնածուների համար ստեղծել է անհավասար պայմաններ և, առանձին դեպքերում, հանգեցրել մրցակցային առավելություն: Հանրային առողջապահական իրական վտանգից ելնելով՝ թեկնածուներից շատերը ստիպված են եղել իրենց պոտենցիալ ընտրողներին, համակիրներին ու աջակցող կամավորներին ոչ թե ակտիվանալու կոչ անել, այլ հակառակը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կողմնորոշել են նրանց հնարավորինս զերծ մնալ ակտիվ հանրային կյանքից: Մինչդեռ այլ թեկնածուներ, ընտրությունների անցկացումից եկող վտանգը կառավարելի համարելով, կոչ են արել իրենց ընտրողներին, համակիրներին, իրենց սատարող կամավորներին ակտիվ մասնակցել ընտրական գործընթացին:

[11] https://arcakh24.info/hy/ah-nakhagahi-teknatsuneri-hamategh-haytararutyun/

3.3.1. Նախընտրական քարոզչություն ԶԼՄ-ներով

Նախընտրական քարոզչությունն իրականացվել է նաև Հանրային հեռուստաընկերության և ռադիոյի միջոցով: Հանրային հեռուստաընկերությունը շաբաթը երկու անգամ հաճախականությամբ կազմակերպել է հեռուստաբանավեճ քաղաքական ուժերի ներկայացուցիչների միջև՝ ընտրապայքարի երկուական ներկայացուցիչների մասնակցության ձևաչափով: Թեկնածուները, որպես կանոն, դժգոհություն չեն արտահայտել հանրային լրատվամիջոցներով իրենց քարոզարշավը լուսաբանելու առումով՝ բացառությամբ մեկ դեպքի, երբ խորհրդարանական ընտրությունների մասնակիցներից մեկը դժգոհել է, որ իր խոսքը մոնտաժվել է: Ի պատասխան մեր բանավոր հարցման՝ Արցախի Հանրային հեռուստաընկերությունում հաստատել են մոնտաժման փաստը՝ նշելով, որ դրա պատճառը բանավեճի մասնակցի՝ բանավեճի չմասնակցող մեկ այլ թեկնածուի հասցեին հնչեցրած եթերի համար անընդունելի խոսքն է եղել, իսկ մոնտաժ անելու մտադրության մասին թեկնածուն տեղեկացվել է բանավեճի տեսագրությունից անմիջապես հետո:

Քարոզարշավի վերջին օրն Արցախի Հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում կազմակերպվել է հեռուստաբանավեճ՝ նախագահի 12 թեկնածուների մասնակցությամբ: նախագահի 2 թեկնածուներ՝ Քրիստին Բալայանը և Մասիս Մայիլյանը հրաժարվել են մասնակցություն ունենալ հեռուստաբանավեճին՝ հայտնելով հեռուստաբանավեճի ձևաչափի առումով իրենց անհամաձայնության մասին: Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում Մասիս Մայիլյանի կողմից ընտրությունները բոյկոտելու հետևանքով նախագահի թեկնածուների միջև Հանրային հեռուստաընկերության կողմից նախօրոք ծրագրված հեռուստաբանավեճի փոխարեն տեղի է ունեցել Արայիկ Հարությունյանի և Արցախի Հանրային հեռուստաընկերության լրագրողի միջև հարցազրույց:

Հարկ է նշել, որ հրապարակային բանավեճի իրականացման փաստն ինքնին ողջունելի է, քանի որ հեռուստաբանավեճերը մեծապես նպաստում են ընտրողների կողմից ավելի գիտակից ընտրության կայացմանը: Այդուհանդերձ հարկ է նկատել, որ կայացած հեռուստաբանավեճի ձևաչափը թեկնածուների մեծ քանակի պարագայում խնդրահարույց է, քանի որ ժամանակը չի բավականացնում ծրագրային դրույթները լիարժեքորեն ներկայացնելու, պաշտպանելու և բանավիճելու համար, ինչի արդյունքում ընտրողները, փաստորեն, գաղափարական բանավեճի ականատես չեն լինում:

Հարկ է նկատել, որ Արցախի նախագահական ընտրությունների քարոզարշավում կարևորագույն դեր են կատարել ոչ միայն Արցախի հեռահաղորդակցության միջոցները, այլև՝ Հայաստանի: Որոշ թեկնածուների ընդգծված ներկայացվածությունը Հայաստանի Հանրային հեռուստատեսության հաղորդումներում, կամ հանդիպումները ՀՀ վարչապետի ու ՀՀ Ազգային ժողովի նախագահի հետ ձևավորել են պաշտոնական Երևանի հովանավորչության վերաբերյալ ընկալումներ և որոշակիորեն խաթարել մրցակցային միջավայրը:

Թեկնածուների և կուսակցությունների մեծ մասն ակտիվորեն օգտագործել է նաև առցանց հարթակները, մասնավորապես՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցը: Որոշները նաև

հնարավորություն են ունեցել քարոզչություն իրականացնել հայաստանյան լրատվամիջոցներով:[12]

3.3.2. Քարոզչական նյութերի տարածում

ԱՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրություններին մասնակցող նախագահի թեկնածուները և կուսակցությունները (կուսակցությունների դաշինքներն) իրավունք ունեն անարգել տարածելու քարոզչական տպագիր և այլ նյութեր:[13] Նախընտրական քարոզչությունը սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական նյութեր փակցնելու համար առանձնացնել անվճար տեղեր: Հանրության համար տեսանելի քարոզչական նյութեր կարող են փակցվել հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում՝ պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա: Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ, որոնց բացակայությունն առաջացնում է վարչական պատասխանատվություն:[14]

Առաքելության դիտորդներն արձանագրել են քարոզչական նյութերի տարածման կանոնների բազմաթիվ խախտումներ: Մասնավորապես՝ պաստառներ և այլ տպագիր նյութեր են փակցված եղել մթերային, մսի և բանջարեղենի խանութներում, առևտրի կենտրոններում, տաքսիների վրա, հանրային տրանսպորտի կանգառներում, սյուների վրա և այլն: Արձանագրվել է քարոզչական նյութերի փակցման կարգի խախտումների ավելի քան 230 դեպք ինչպե՛ս Ստեփանակերտում, այնպե՛ս էլ՝ բոլոր շրջաններում:[15] Խախտումների թվում գերակշռող մաս են կազմել «Ազատ հայրենիք», «Միասնական հայրենիք» կուսակցությունների, ինչպես նաև՝ նախագահի թեկնածուներ Արայիկ Հարությունյանի ու Մասիս Մայիլյանի պաստառները և տպագիր այլ նյութերը:

Միևնույն ժամանակ արձանագրվել է շուրջ 22 դեպք, երբ թեկնածուների և կուսակցությունների կողմից խախտվել են քարոզչական տպագիր նյութերին ներկայացվող պահանջները. նյութերի վրա բացակայել է տեղեկատվությունը պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ:[16] Պահանջվող տվյալներն ամբողջությամբ կամ մասնակի բացակայել են «Միասնական հայրենիք» կուսակցության թռուցիկների,

---

[12] https://bit.ly/2XnmIXM
[13] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 1
[14] Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 40.1
[15] https://drive.google.com/file/d/1L4HpJ23crp1eUWHENpmnWfQyi8LLYgqu/view?fbclid=IwAR2VHNx3ixC2hTQ0XNckq7nQcE_7d0r7HltZjGZNVCPXUoxOOO7155uhzI
[16] https://drive.google.com/file/d/1yVH9YCgQZ5ceS8ud6BXQCVvDskQwiq3o/view?fbclid=IwAR04kzbrtb5kGdhZFsYg8S5gnkL4zU-I6-ozUmyMGS_Sc1oFc-3Qqa2yxtc

նախագահի թեկնածուներ Վիտալի Բալասանյանի, Ռուսլան Իսրայելյանի, Մասիս Մայիլյանի պաստառների, ինչպես նաև՝ «Անկախության սերունդ» կուսակցության, «Հայ հեղափոխական դաշնակցության» բուկլետների և թռուցիկների վրա: Դիտորդների կողմից գրանցված մի քանի խախտում վերաբերել է արտաքին վճարովի վահանակների վրա ներկայացված տվյալներին: Մասնավորապես՝ նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի և «Ազատ հայրենիք» կուսակցության վահանակների վրա, որպես տպաքանակ, նշված է 1 կամ 2 օրինակ, մինչդեռ, փաստացի, տարբեր համայնքներում նման վահանակների թիվն ակնհայտորեն գերազանցել է մի քանի տասնյակը:

Դիտորդության շրջանակներում առաքելության կողմից արձանագրվել են խնդիրներ՝ կապված գովազդային վահանակների տեղադրման հետ: ԱՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կառույցները քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրման դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ԱՀ նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:[17] Ընտրական օրենսդրությունը չի պարունակում ընթացակարգեր վահանակների հատկացման հարցում թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար հնարավորությունների ապահովման և վահանակների գնագոյացման վերաբերյալ: Ավելին, քաղաքային համայնքներում արտաքին գովազդային վահանակները հիմնականում տնօրինում են համայնքապետարանները, ինչը պարունակում է վարչական ռեսուրսի չարաշահման զգալի ռիսկեր, հատկապես, եթե համայնքի ղեկավարը հանդիսանում է համապետական ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկի անդամ: Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից բարձրաձայնվել է նաև համայնքի ղեկավարների կողմից արտաքին վահանակներ տեղադրելու թույլտվության մերժումների խնդիրը, որի ուսումնասիրման համար առաքելության կողմից հարցումներ են ուղարկվել 10 քաղաքային համայնքների ղեկավարներին՝ համայնքապետարանների կողմից հատկացված վահանակների քանակի, արժեքի, ինչպես նաև թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև վահանակների բաշխման վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով: Հադրութ, Բերձոր և Կովսական համայնքների համայնքապետարաններ ուղղված հարցումներին առաքելությունը պատասխան չի ստացել: Մյուս 7 համայնքապետարանները ոչ լիարժեք են պատասխանել հարցմանը, չտարամադրելով ըստ հստակ քանակի, հասցեների և մակերեսների կոնկրետ կուսակցություններին ու թեկնածուներին հատկացված վահանակների վերաբերյալ սպառիչ պատասխաններ, ինչը թույլ չի տալիս հիմնավոր վերլուծություն և եզրահանգում կատարել տարբեր կուսակցությունների կողմից բարձրաձայնված վերը նշված խնդրի մասին:

2020թ. մարտի 1-ին ԱՀ Մարտունի քաղաքում առաքելության դիտորդները նկատել են «Ազատ հայրենիք» կուսակցության կողմից առաջադրված նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի քարոզչական տպագիր պաստառ՝ արտաքին գովազդային վահանակի տեսքով՝ տեղադրված համայնքի փողոցում: Սակայն, Մարտունի համայնքի ղեկավար Հայկ Սարգսյանի կողմից տվյալ արտաքին գովազդային վահանակի տեղադրման թույլտվությունը տրվել է միայն հաջորդ օրը՝ 2020թ. մարտի 2-ին կայացված որոշմամբ: Այսինքն՝ վահանակը

[17] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 21, մաս 6

տեղադրված է եղել առանց համապատասխան որոշման առկայության, որով կոպտորեն խախտվել են օրենքով սահմանված պահանջները:

3.3.3. Քարոզչություն իրականացնելու իրավունքի սահմանափակումներ

Համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքի՝ արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել հանրային ծառայողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս:[18]

Քարոզչություն իրականացնելու արգելքը տարածվում է նաև ընտրական հանձնաժողովների անդամների վրա:[19] Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից քարոզչության երկու դեպք է արձանագրվել Մարտունու շրջանում: Մասնավորապես, Մարտունու ընտրատարածքի թիվ 5/1 ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահ Լուսինե Խաչատրյանը, ով, միաժամանակ, հանդիսանում է ԱՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի պետ և «Ազատ հայրենիք» կուսակցության նախընտրական քարոզարշավի իրազեկման խմբի անդամ, կրել է «Ազատ հայրենիք» կուսակցության լոգոտիպով հագուստ և շրջել տարածքում: Նույն ընտրատարածքի թիվ 5/10 ընտրատեղամասի նախագահ Էդուարդ Աղաբեկյանը ելույթ է ունեցել Գիշի համայնքում և քարոզչություն իրականացրել նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի օգտին՝ խախտելով ընտրական օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Արձանագրված դեպքերի մասով «Ականատեսի» կողմից պատրաստվել և համապատասխան ընտրական հանձնաժողովներ են ներկայացվել դիմում-բողոքներ՝ խախտում թույլ տված հանձնաժողովների նախագահներին պատասխանատվության ենթարկելու նպատակով: Դիմում-բողոքին ի պատասխան 5/1 ՏԸՀ նախագահից ստացվել է բացատրագիր, որում վերջինս նշել է, որ չի ունեցել ԸՕ պահանջների խախտելու դիտավորություն և կուսակցության իրազեկման խմբի հավաքին մասնակցել է «ընկերական» կապերի բերումով և սոցիալական հարթակներից հեռացրել է քարոզչության տարրեր պարունակող իր լուսանկարները: Նշենք, որ բացի բացատրագիր ներկայացնելուց և լուսանկարները հեռացնելուց, ՏԸՀ նախագահը որևէ այլ պատասխանատվության չի ենթարկվել վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից:

Դիտարկված երկրորդ դեպքում՝ 5/10 ՏԸՀ նախագահի մասնակցությամբ գրանցված խախտման առթիվ ներկայացված դիմում-բողոքի մասով նույն թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովը վարչարարություն չի իրականացրել՝ պատճառաբանելով, որ նախքան դիմում-բողոք ներկայացնելը 5/10 ՏԸՀ նախագահը ներկայացրել է ինքնաբացարկի դիմում և հանձնաժողովի անդամ չի հանդիսանում: Առաքելությունը ՏարԸՀ-ի գործողությունները բողոքարկել է ԿԸՀ-ում: Մինչդեռ ԿԸՀ-ն,

[18] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 5
[19] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 5

դրսևորելով անգործություն, որևէ որոշում չի կայացրել՝ ակնհայտորեն խախտելով օրենքի պահանջները:

Նշված երկու դեպքում էլ առաքելությունը խիստ անբավարար է համարում ինչպե՛ս ՏարԸՀ-ի, այնպե՛ս էլ ԿԸՀ-ի գործողությունները և անգործությունը՝ նշված խախտումը վերացնելու և խախտումը կատարած անձին պատասխանատվության ենթարկելու տեսանկյունից:

3.3.4. Քարոզչություն իրականացնելու կարգ

«Ականատեսի» դիտորդներն արձանագրել են դեպքեր, երբ նախագահի թեկնածուները և կուսակցությունները կազմակերպել են հանդիպումներ հանրային ծառայողների հետ աշխատանքային ժամերին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող կառույցներում: Մասնավորապես՝ թեկնածուների և կուսակցությունների սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի դիտարկման արդյունքում արձանագրվել է նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանի հանդիպումը Ստեփանակերտի քաղաքապետարանի ներկայացուցիչների[20] և Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կոլեկտիվի հետ,[21] «Անկախության սերունդ» կուսակցության հանդիպումը Ստեփանակերտի քաղաքապետարանի անձնակազմի հետ,[22] «Արցախի ժողովրդավարական կուսակցության» հանդիպումը Ստեփանակերտի քաղաքապետարանի և բնակշահագործման տեղամասերի աշխատակիցների հետ,[23] «Հայ հեղափոխական դաշնակցության» հանդիպումը Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակիցների հետ: Հարկ է նշել, որ օրինակ՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի դահլիճը պաշտոնապես ներառված չէ Ստեփանակերտի քաղաքապետի որոշմամբ հաստատված՝ նախընտրական քարոզչություն իրականացնելու անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկում:[24]

Ինչպես նշվել է վերևում, պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածից դուրս իրականացվող քարոզչության կանոնակարգումները բացակայում են: Այսինքն, «նախընտրական քարոզչություն» են համարվում 2020թ. փետրվարի 26-ից սկսած նախագահի թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից անցկացվող միջոցառումները: Մինչդեռ, նախընտրական քարոզչությունն Արցախում փաստացի սկսել է իրականացվել ավելի վաղ: Օրինակ՝ մինչև պաշտոնական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը նախագահի թեկնածուներ Արայիկ Հարությունյանը[25] և Մասիս Մայիլյանը,[26] ինչպես նաև «Ազատ հայրենիք», «Միասնական հայրենիք»[27] և «Անկախության սերունդ» կուսակցությունները[28] Արցախի ուսումնական հաստատություններում հանդիպումներ են ունեցել տվյալ հաստատությունների անձնակազմի հետ: Հարկ է նշել, որ

[20] https://www.facebook.com/MasisMayilian/posts/2870332859702563
[21] https://www.facebook.com/watch/?v=186772362741445
[22] https://www.facebook.com/watch/?v=493775734845519
[23] https://www.facebook.com/DemocraticPartyOfArtsakh/posts/2619723841414252?__tn__=-R
[24] ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետի որոշում N 289-Ա, http://cecnkr.am/wp-content/uploads/2020/01/Stepanakert2.pdf
[25] https://www.facebook.com/azathayrenik/posts/1903100366493453?__tn__=-R
[26] https://www.facebook.com/MasisMayilian/posts/2840194379383078,
[27] https://www.facebook.com/44.miasnakan.hayreniq/posts/187950545948366?__tn__=-R
[28] https://www.facebook.com/ankakhutyanserundkusaktsutyun/posts/3508384162566773?__tn__=-R

«Հանրակրթության մասին» ԱՀ օրենքի համաձայն՝ ուսումնական հաստատություններում քաղաքական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են:[29]

ԱՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է նաև քարոզչությունը քվեարկության նախորդ օրը: Այս արգելքի խախտում է արձանագրվել Ստեփանակերտ քաղաքում, մասնավորապես՝ քվեարկության օրվան նախորդող օրը 6 թիվը (նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի հերթական համարը քվեաթերթիկում) պատկերող փուչիկներ են բաց թողնվել օդ և տևական ժամանակ սավառնել երկնքում:

Քվեարկության նախօրեին միջադեպ է գրանցվել նախագահի թեկնածուներից մեկի՝ Վիտալի Բալասանյանի մասնակցությամբ: Վերջինս մարտի 29-ին իր ֆեյսբուքյան էջի միջոցով, մասնավորապես, հայտարարել էր, որ Արցախի բանակի հրամանատարությունը խոչընդոտել է իր նախընտրական քարոզչությանը: Այս հայտարարությանն ի պատասխան, Արցախի պաշտպանության նախարարությունը, իր հերթին, հայտարարություն է տարածել, որում, մասնավորապես, նշվում էր՝ «նախագահի թեկնածու Վիտալի Բալասանյանը մոտեցել է ծառայողական պարտականությունների կատարման վայրում գտնվող պայմանագրային զինծառայողներին, բաժանել է քարոզչական բուկլետներ՝ միաժամանակ իրականացնելով նախընտրական քարոզչություն»:

3.3.5. Նախընտրական քարոզչության խոչընդոտում

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են նախընտրական քարոզչության ազատ իրականացումը՝ նախընտրական ժողովներ, նախագահի թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով:[30] Նախընտրական քարոզչության խոչընդոտումը քրեորեն պատժելի արարք է:[31]

Քարոզչություն իրականացնելուն խոչընդոտելու առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի Մարտունու համայնքի ղեկավար, միաժամանակ՝ «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ և Մարտունու նախընտրական գրասենյակի ղեկավար Հայկ Սարգսյանի վարքագիծը: 2020թ. մարտի 18-ին Մարտունու քաղաքապետն արգելափակել է Արցախի հեղափոխական կուսակցության ներկայացուցիչների մուտքը Մարտունի համայնք:[32] Միջադեպի վերաբերյալ հայտարարությամբ է հանդես եկել ԱՀ մարդու իրավունքների պաշտպանը, որով նա «անընդունելի է համարում Մարտունու համայնքի ղեկավարի տվյալ գործողությունները, որոնք հանգեցրել են կոնկրետ խմբի անձանց նախընտրական քարոզչության ազատ իրականացման իրավունքի և հավաքների ազատության խախտման»:[33] Խախտման փաստի առթիվ ԱՀ գլխավոր դատախազությունը հարուցել է քրեական գործ ԱՀ քրեական օրենսգրքի 147.1 հոդվածով (Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը): Քրեական գործի նախաքննության ընթացքում Մարտունու քաղաքապետ Հայկ Սարգսյանին

[29] «Հանրակրթության մասին» ԱՀ օրենք, հոդված 4, մաս 8
[30] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 2
[31] ԱՀ քրեական օրենսգիրք, հոդված 147.1
[32] https://www.facebook.com/100842544616748/videos/2378910342212570
[33] https://www.facebook.com/ArtsakhOmbuds/posts/1498704846963339

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 147.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Գործը գտնվում է նախաքննության փուլում:

Ի պատասխան քարոզչության խոչընդոտման վերոնշյալ փաստի՝ Արցախի հեղափոխական կուսակցության համակիրները կազմակերպել են խաղաղ բողոքի ակցիա՝ փակելով Ստեփանակերտի Վազգեն Սարգսյան փողոցը:[34] Համաձայն ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի և ոստիկանության հայտարարությունների՝ ոստիկանության միջամտության արդյունքում ձերբակալվել է 13 անձ: Ձերբակալման ընթացքում մեկ քաղաքացի ստացել է կողոսկրերի մեխանիկական վնասվածքներ,[35] ինչը կասկածի տակ է դրել ոստիկանության կողմից կիրառված ուժի համաչափությունը: Խաղաղ հավաքի խոչընդոտման և ոստիկանության կողմից կիրառված ուժի իրավաչափության կապակցությամբ առաքելության կողմից հաղորդումներ են ներկայացվել ԱՀ գլխավոր դատախազություն, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հանգամանքով:

Մեկ այլ դեպքում, կրկին Մարտունու քաղաքապետի կողմից արգելվել է Արցախի հեղափոխական կուսակցության նախընտրական հանդիպումը ընտրողների հետ Մարտունու քաղաքապետարանի շենքին հարող հրապարակում: Մարտունու քաղաքապետարանը տարածել է հայտարարություն՝ հորդորելով Արցախի հեղափոխական կուսակցության նախագահ Արթուր Օսիպյանին «քարոզչական միջոցառումներն անցկացնել օրենքով սահմանված կարգով ու քաղաքապետարանի կողմից հատկացված վայրերում և սահմանված ժամերին նախօրոք թույլտվություն ստանալուց հետո, օրենքից դուրս ցանկացած դրսևորում կարժանանա համաժողովրդական արհամարհանքի»:[36] Համաձայն դիտորդների հավաքագրած տվյալների՝ Արցախի հեղափոխական կուսակցության հավաքն «արգելողների» կազմում են եղել նաև «Ազատ հայրենիք» կուսակցության մի շարք համակիրներ:

Ավելի վաղ՝ փետրվարի 21-ին, նախքան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը ԱՀ ոստիկանության կողմից խոչընդոտվել է Արցախի հեղափոխական կուսակցության մեկ այլ միջոցառման՝ խաղաղ ավտոերթի տեսքով իրազեկման ակցիայի իրականացումը[37], ինչի արդյունքում ոստիկանության կողմից բերման են ենթարկվել կուսակցության նախագահը և կուսակցության այլ ներկայացուցիչներ:

«Ականատես» դիտորդական առաքելությունը գտնում է, որ նախընտրական հավաքների խոչընդոտումը և՛ քաղաքապետի, և՛ ոստիկանության ներկայացուցիչների կողմից անօրինական է եղել, նույնիսկ եթե հավաքի մասին չի եղել պատշաճ իրազեկում: Համաձայն «Հավաքների ազատության մասին» ԱՀ օրենքի՝ եթե նույնիսկ հավաքն անցկացվում է օրենքով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, սակայն այն

[34] https://www.facebook.com/Artsakh1.am/videos/575591263032118/, https://www.facebook.com/Artsakh1.am/videos/514838662512631/ , https://www.facebook.com/Artsakh1.am/videos/2607899862863169/
[35] https://www.facebook.com/ArtsakhOmbuds/posts/1499804260186731
[36] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1976128049871 55&id=100042153098959
[37] https://www.facebook.com/watch/?v=210362450086677

խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն ունի պարտավորություն՝ իր իրավասությունների սահմաններում աջակցելու հավաքի իրավունքի իրացմանը:[38]

Նկատենք, որ վերը նշված միջադեպերով պայմանավորված Մարտունու քաղաքապետը դեպքից շուրջ 2 ամիս անցած հրաժարականի դիմում է ներկայացրել:ԱՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ ընտրությունների ժամանակ Արցախի հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը պարտավոր են Հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրական պայմաններ: Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության լրատվական հաղորդումներում ԱՀ նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզարշավի վերաբերյալ, ընդհանուր տպավորությամբ, ներկայացվել է անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն: Այդուհանդերձ, 2020 թ. մարտի 21-ին «Ականատեսի» դիտորդներն արձանագրել են մի երևույթ, որը կարելի է դիտարկել մրցակցային պայմաններին միջամտություն: Մասնավորապես, ժամը 20:00-ին «Օր» լրատվական հաղորդումից հետո, հեռարձակվել է լրատվականին կից «Օր» հավելվածը՝ նվիրված ԱՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի նկատմամբ իրականացված մահափորձի 20-ամյակին: Հաղորդումը սկսվել է «Ահաբեկչություն պետականության դեմ» վերնագրով, որի դրվագներից մեկում Ա. Ղուկասյանի թիկնապահը, ինչպես նաև մահափորձի այլ վկաներ, խոսել են մահափորձի օրվա մասին և նկարագրել այն ժամանակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարար, իսկ ներկայում՝ ԱՀ համապետական ընտրություններում «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Սամվել Բաբայանի գործողությունները՝ շեշտելով, որ նա է ամբողջությամբ պլանավորել Ա.Ղուկասյանի մահափորձը:

3.3.6. Ատելության խոսք

Չնայած նախընտրական քարոզչությունը հիմնականում զերծ է եղել բռնության, սպառնալիքի և ատելության կոչերից, որոշ դրվագներում, սակայն, թեկնածուները և նրանց ներկայացուցիչները հանդես են եկել ոչ պատշաճ խոսույթով և անձնավորված թիրախավորել մրցակիցներին՝ հետին պլանում թողնելով թեկնածուների և կուսակցությունների նախընտրական ծրագրերն ու դրանց շուրջ քննարկումները: Դիտորդների կողմից եզակի դրվագներում ատելության խոսքի բնորոշիչներով ուղերձներ են արձանագրվել նախագահի թեկնածուներ Վիտալի Բալասանյանի, Սամվել Բաբայանի, Արցախի հեղափոխական կուսակցության նախագահ Արթուր Օսիպյանի և Արայիկ Հարությունյանի մամլո խոսնակ Վահրամ Պողոսյանի կողմից: Վերջինս, մասնավորապես, ֆեյսբուքյան իր էջի միջոցով և մարտի 10-ին ArmDaily.am լրատվականի հետ զրույցում վիրավորական և ատելության խոսքեր է տարածել Նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի հասցեին քննադատաբար արտահայտված քաղաքագետ Մանվել Սարգսյանի հասցեին[39]:

Հարկ է նշել, որ նախընտրական իրավիճակի թեժացման հետ մեկտեղ արձանագրվել են սպառնալիքներ քրեական անցյալ ունեցող անձի՝ Սամվել Աբրահամյանի կողմից 2020թ. մարտի 20-ին հրապարակված ֆեյսբուքյան տեսանյութում՝ ուղղված Մասիս Մայիլյանին և,

[38] «Հավաքների ազատության մասին» ԱՀ օրենք, հոդված 32, մաս 2
[39] https://armdaily.am/?p=83573&l=am

հատկապես, նրան սատարող «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Սամվել Բաբայանին: Սպառնալիքները անմիջականորեն ուղղված չեն եղել քարոզչություն անելուց հրաժարվել հարկադրելուն, սակայն ակնհայտորեն միտված են եղել նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանին ու նրան սատարող ուժերին Արայիկ Հարությունյանի հետ ընտրապայքարում կաշկանդելուն :[40]

Առհասարակ, սոցիալական ցանցերում ընտրապայքարի գրեթե բոլոր մասնակիցների համակիրների գրառումներում հնչել են վիրավորական և սպառնալից ենթատեքստ ունեցող արտահայտություններ: Այս հանգամանքը փաստում է, որ հանրության որոշակի խմբերի պատկերացումները քաղաքական արժանապատիվ մրցակցային մշակույթի վերաբերյալ բավականին խեղաթյուրված են:

3.3.7. Վարչական ռեսուրսի չարաշահում

«Վարչական ռեսուրս» կոնցեպտը սահմանված չէ ԱՀ օրենսդրությամբ, սակայն, ըստ միջազգայնորեն ընդունված նորմերի՝ վարչական ռեսուրսը քաղաքական պաշտոնյաների ու հանրային այլ ծառայողների ի պաշտոնե տնօրինության տակ գտնվող իրավական, մարդկային, ֆինանսական, նյութական և ոչ նյութական միջոցներն են: Ընտրությունների ժամանակ դրանց օգտագործումը հօգուտ որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ և կարող է ազդել ընտրությունների արդյունքների վրա:

ԱՀ նախագահի թեկնածուների, ինչպես նաև կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական շտաբների մի շարք ներկայացուցիչներ «Ականատեսի» ներկայացուցիչների հետ հանդիպումներում ահազանգել են Արցախի շրջանների «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ հանդիսացող համայնքների ղեկավարների կողմից վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ: Ըստ որոշ պնդումների՝ նշված կուսակցության անդամ հանդիսացող համայնքապետերն իրենց համայնքներում ջանացել են «Ազատ հայրենիք» կուսակցության և նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի նախընտրական միջոցառումներին ապահովել առավելագույն թվով մասնակիցներ՝ օգտագործելով վարչական լծակները և ազդեցությունը համայնքային կառույցների վրա (օրինակ՝ դպրոց, մշակույթի կենտրոն և այլն), մինչդեռ մնացած թեկնածուների մասով համայնքի բնակիչների իրազեկում չեն իրականացրել: Չնայած որ նախընտրական հանդիպումների մասին իրազեկումը տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունների մաս չէ, նշված իրավիճակը կարող է ստեղծել անհավասար պայմաններ մրցակից քաղաքական ուժերի և թեկնածուների համար: Հարկ է նշել, որ նշված դրվագների մասին ահազանգողները հստակ տվյալներ ու փաստեր չեն տրամադրել դիտորդական առաքելությանը համայնքների կուսակցական ղեկավարների կողմից նման չարաշահումների վերաբերյալ, այդուհանդերձ, շատերի կողմից նույնաբովանդակ խնդրի բարձրաձայնումը մտահոգիչ է:

3.3.8. Ընտրակաշառք և «բարեգործություն»

Բարեգործության մասով ԱՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ ընտրությունների անցկացման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների

[40] https://www.facebook.com/100011628196764/videos/977620599302204/?t=0

արդյունքների ամփոփումը թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) հանգեցնում է քրեական պատասխանատվության:[41]

Դիտորդական առաքելությունը մի քանի աղբյուներից ստացել է տեղեկություն հետևյալ խնդիրների առնչությամբ.

- 2018-2020թթ. ընթացքում Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում Արցախի բնակչությանը տրամադրվել են պետական սուբսիդավորմամբ վարկեր բնակելի տարածքների կամ բնակարանների վերանորոգման նպատակով՝ ԱՀ նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի օգտին քվեարկելու պայմանով:
- 2018-2020թթ. «Արարիչ» բարեգործական հիմնադրամի կողմից Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (որի հոգաբարձուների խորհրդի նախագահն է Արայիկ Հարությունյանը) ընտրելու իրավունք ունեցող և առաջին անգամ ընտրող ուսանողների համար կազմակերպվել են այցեր մի շարք հանգստավայրեր (մասնավորապես՝ Ծաղկաձոր և Գելենջիկ՝ Ռուսաստանի Դաշնությունում), որի ընթացքում հանդիպումներ և քաղաքական թեմաներով քննարկումներ են կազմակերպվել Արայիկ Հարությունյանի հետ:
- Նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի կողմից վճարումներ են կատարվել իր և «Ազատ հայրենիք» կուսակցության նախընտրական շտաբների կամավորներին 100,000 դրամի չափով, որոնք որևէ կերպ արձանագրված չեն հաշվապահական փաստաթղթերում:
- 2018-2020թթ. ԱՀ կառավարության կողմից վարչական շրջաններին հատկացվող բյուջեի շրջանակներում վարչական շրջանների ղեկավարների հայեցողությամբ շրջանի բնակիչներին անվճար տրամադրվել է շինանյութ՝ բնակելի տարածքների վերանորոգման նպատակով՝ Արայիկ Հարությունյանի օգտին քվեարկելու պայմանով:

Բարձրաձայնված խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով առաքելության կողմից գրավոր հարցումներ են ուղարկվել համապատասխան կառույցներին՝ Արցախի ներդրումային և «Արարիչ» բարեգործական հիմնադրամներին, «Ազատ հայրենիք» կուսակցությանը և նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանին: Ստացված պատասխաններն ամփոփելով վերոնշալ խնդիրների մասով կարելի է արձանագրել հետևյալը.

- ԱՀ ներդրումային հիմնադրամից ստացված տվյալներից պարզ է դառնում, որ 2019թ. համեմատ 2018թ. շահառուների քանակը ավելացել է 2,5 անգամ, իսկ փոխառությունների չափը՝ մոտ 10 անգամ, ինչը, վերը նշված խնդիրների համատեքստում, մտահոգությունների տեղիք է տալիս:
- «Արարիչ» բարեգործական հիմնադրամի կողմից նշված ժամանակահատվածում իրականացված և ընթացիկ ծրագրերի անվանումները, շահառուների քանակը և

[41] ԱՀ Քրեական օրենսգիրք, հոդված 154, մաս 1

իրականացված ծախսերը պարզելու համար ուղարկված հարցմանն ի պատասխան հիմնադրամը տրամադրել է ոչ ամբողջական տեղեկություն: Այդուհանդերձ, թեև առկա չեն տվյալներ մասնակից ուսանողների առջև Հարությունյանի օգտին քվեարկելու պայման դնելու վերաբերյալ, այս «բարեգործությունը» մրցակիցների կողմից դիտվում է որպես «ձայների գնում»:

Առաքելությունը փորձել է ճշգրտել շտաբների կամավորների վճարման և վարչական շրջաններում շինանյութի անվճար տրամադրման վերաբերյալ տարբեր աղբյուների կողմից ստացված տեղեկությունները, սակայն լրացուցիչ ինֆորմացիա ստանալ չի հաջողվել, իսկ «Ազատ հայրենիք» կուսակցությանը և նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանին հասցեգրված գրավոր հարցումներն ամբողջությամբ անտեսվել են վերջիններիս կողմից:

ԱՀ նախագահի թեկնածուներից ոմանք հայտնել են նաև, որ որոշ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից նկատվում են ճնշումներ և հրահանգավորումներ ընտրողներին՝ քվեարկել Արայիկ Հարությունյանի օգտին, ապա տեղամասերում նկարել և թեկնածուի համակիրներին ցույց տալ լրացված քվեաթերթիկները՝ դրա դիմաց խոստանալով որևէ նյութական վարձատրություն, հակառակ դեպքում սպառնալով ազատել աշխատանքից, զրկել վարկային հնարավորություններից և այլն: Ավելի ուշ՝ քվեարկության օրվա դիտարկումը ցույց տվեց, որ նման մտավախությունները հիմնավոր էին, քանի որ ինչպե՛ս «Ականատեսի», այնպե՛ս էլ այլ դիտորդների ու վստահված անձանց կողմից բացահայտվել են տեղամասերում ընտրողների կողմից նշված թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկների լուսանկարման բազմաթիվ դեպքեր:

«Ականատեսի» համար մտահոգիչ են նաև երրորդ անձի կողմից բարեգործության խոստումները, որոնք ակնհայտ մրցակցային առավելություն են տալիս ընտրություններին մասնակցող կոնկրետ թեկնածուին: Մասնավորապես, մեծահարուստ գործարար և բարերար Ռուբեն Վարդանյանը հայտարարություն է արել այն մասին, որ «եթե Արայիկ Հարությունյանն ընտրվի ԱՀ նախագահ», նա կաջակցի վերջինիս ծրագրերի իրականացմանը:[42] Այսինքն, գործարարի տվյալ խոսքից բխում է, որ Արայիկ Հարությունյանի նախագահ չդառնալու պարագայում նա ձեռնպահ կմնա Արցախի զարգացման ծրագրերին օժանդակելուց: Սա երրորդ անձի, տվյալ դեպքում՝ մեծահարուստ գործարարի կողմից ներդրում և «հանրային» բարեգործություն անելու խոստում է, որը թեև արգելված չէ ԱՀ օրենսդրությամբ, սակայն ակնհայտորեն ձևավորում է անհավասար մրցակցային պայմաններ:

«Ականատեսի» կողմից հարցում է ուղարկվել ԱՀ ոստիկանություն՝ կաշառք տալու կամ ստանալու, բարեգործության վերաբերյալ ներկայացված հաղորդումների, ինչպես նաև հարուցված քրեական գործերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Համաձայն մարտի 18-ին ստացված պատասխան գրության՝ մարտի 13-ի դրությամբ ընտրակաշառքի և բարեգործության վերաբերյալ ստացվել էր մեկ հաղորդում ԱՀ դատախազությունից՝ հիմնված «factor.am» կայքում հրապարակված տեղեկատվության վրա:[43] Հաղորդման կապակցությամբ Ոստիկանությունը ձեռնարկել էր համապատասխան ստուգումներ:

[42] https://news.am/arm/news/566766.html
[43] https://factor.am/227636.html

3.4. Նախընտրական քարոզչության ֆինանսավորման խնդիրները

Դիտորդական առաքելության շրջանակներում իրականացվել է նաև կուսակցությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման ուսումնասիրություն: Այս նպատակով իրականացվել է ինչպե՛ս առնչվող փաստաթղթերի գրասենյակային հետազոտություն, այնպե՛ս էլ՝ երկարաժամկետ դիտորդների կողմից հավաքագրված տվյալների ուսումնասիրություն ու համեմատական վերլուծություն: Ուսումնասիրության հիմնական խնդիրներն են եղել՝

- գնահատել նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման օրինավորությունը և համապատասխանությունը միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված նորմերին.
- գնահատել ԱՀ խորհրդարանական ընտրություններում թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ֆինանսական մուտքերն ու ելքերը և դրանց թափանցիկությունը.
- բացահայտել նախընտրական քարոզարշավի ընթացքում ձևավորված նախընտրական հիմնադրամներ կատարված մուտքերի աղբյուրները, ինչպես նաև՝ հիմնադրամների շրջանակում և դրանցից դուրս իրականացված ծախսերի ծավալները.
- գնահատել երրորդ անձանց կողմից նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման հնարավորությունները և դրանց առնչվող խնդիրները.
- գնահատել նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման նկատմամբ պետական վերահսկողության արդյունավետությունը.
- բացահայտել նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման առումով ԱՀ օրենսդրության բացերը և ներկայացնել առաջարկություններ քարոզարշավի ֆինանսավորման օրենսդրական և վարքագծային փոփոխությունների վերաբերյալ:

Ուսումնասիրության նյութ են դարձել հետևյալ փաստաթղթերը՝

- ԱՀ ընտրական օրենսգիրքը.
- Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ներկայացրած հայտարարագրերը՝ նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ.
- ԱՀ ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից հրապարակված տեղեկանքներն ու եզրակացությունը.
- Երկարաժամկետ դիտորդների կողմից հավաքագրված տվյալները.
- ԱՀ ԿԸՀ ուղղված պաշտոնական հարցման արդյունքները:[44]

Ուսումնասիրությունն իրականացվել է երկու մակարդակում՝ երկարաժամկետ դիտորդների կողմից՝ գրասենյակային հետազոտության և դաշտային դիտարկմամբ հավաքված տվյալների վերլուծության միջոցով:

Հաշվի առնելով, որ հայտարարագրերում ներառված չեն եղել նախընտրական քարոզչությանն առնչվող բոլոր ծախսերը (նախընտրական շտաբների գրասենյակների

[44] Հարցումն ուղարկվել է 23.04.2020թ.: Ստացված պատասխանը թվագրված է 28.04.2020թ.-ին:

վարձակալությունը, շտաբների աշխատակիցների աշխատավարձերը, նախընտրական միջոցառումների ընթացքում տեխնիկայի վարձակալությունը և այլն)՝ դրանք հաշվարկվել են առաքելության կողմից՝ հիմք ընդունելով տարածքների, տեխնիկայի վարձակալության միջին շուկայական արժեքները և աշխատողների նվազագույն աշխատավարձերը: Բացի դրանից, առաքելության կողմից հաշվարկվել են դիտորդների կողմից արձանագրված միջին և մեծ չափերի նախընտրական գովազդային վահանակների արժեքները՝ միջին շուկայական գների հիման վրա:

Հարկ է նշել, որ հնարավոր են քարոզչության գործընթացում ներգրավված ծառայությունների արժեքների հաշվարկների շեղումներ իրական ծախսերից: Բացի այդ, հնարավոր չի եղել ամբողջական և հավաստի տվյալներ հավաքագրել կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից տրանսպորտային ծառայությունների, վառելիքի ծախսերի վերաբերյալ:

3.4.1. Նախընտրական հիմնադրամների ձևավորում և մուտքեր

Համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքի հոդված 19-ի մաս 1-ի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է Հանրապետության Նախագահի թեկնածուների և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Միևնույն ժամանակ ընտրական օրենսդրությունը չի բացառում տվյալ ժամանակահատվածից դուրս քարոզչության իրականացումը և դա չի համարում քարոզչության կարգի խախտում:

Համաձայն «Կուսակցությունների մասին» ԱՀ օրենքի՝ «Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում, ԿԸՀ են ներկայացնում կուսակցության (կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր»:[45]

Արցախի Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշման ընդունումից հետո՝ 7 օրվա ընթացքում:[46] ԱՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուներն առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորելու իրավունք չունեն:[47]

Նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են ԱՀ տարածքում գործող որևէ առևտրային բանկում: Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների

[45] ԱՀ կուսակցությունների մասին օրենք, հոդված 21, մաս 2
[46] Նույն տեղում, հոդված 26, մաս 1
[47] Նույն տեղում

դաշինքների) դիմումների հիման վրա բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ:[48]

Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամը ձևավորվում է՝

1. այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցությունների) միջոցներից.
2. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների անձնական միջոցներից.
3. ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից:[49]

Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին) իրավունք ունի (ունեն) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հիմնադրամում մուծումներ կատարելու նվազագույն աշխատավարձի մինչև 5,000-ապատիկի չափով, այսինքն՝ 5 մլն. ՀՀ դրամ, իսկ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն՝ նվազագույն աշխատավարձի մինչև 500-ապատիկի չափով գումար, այսինքն՝ 500,000 ՀՀ դրամ: Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում մուծում կատարել նվազագույն աշխատավարձի մինչև 100-ապատիկի չափով գումար,[50] այսինքն՝ 100,000 ՀՀ դրամ (Աղյուսակ 1.):

Աղյուսակ 1. Նախընտրական հիմնադրամ կատարվող մուծումների սահմանաչափը (ՀՀ դրամ)

Աղբյուր	Առավելագույն սահմանաչափ
Կուսակցության սեփական միջոցներ կամ դաշինքի բոլոր կուսակցությունները միասին	5,000,000
Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն	500,000
Ֆիզիկական անձ	100,000

Նախընտրական հիմնադրամը չունի առավելագույն սահմանաչափ: Միակ սահմանաչափն այն է, որ նախընտրական հիմնադրամից կարելի է ծախսել առավելագույնը 30,000,000 ՀՀ դրամ՝ ԱՀ ընտրական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված ապրանքների և ծառայությունների ֆինանսավորման համար:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնադրամ մուտք եղած գումարների մեծության առումով առաջին երեք տեղերում են «Ազատ հայրենիք-ՔՄԴ» դաշինքը, Արցախի «Արդարություն» և «Միասնական հայրենիք» կուսակցությունները: Ամենից քիչ գումար է մուտքագրվել «Անկախության սերունդ» կուսակցության նախընտրական հիմնադրամ՝ 0

[48] Նույն տեղում, հոդված 26, մաս 1
[49] Նույն տեղում, հոդված 26, մաս 3
[50] Նույն տեղում, հոդված 117, մաս 3

դրամ, որին հաջորդում են Արցախի հեղափոխական կուսակցությունը՝ 66,000 ՀՀ դրամով և «Միացյալ Հայաստանը»՝ 300,000 ՀՀ դրամ մուտքերով:

Նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի համար կանխիկի սահմանափակում օրենքով նախատեսված չէ:

3.4.2. Նախընտրական հիմնադրամների ծախսեր

Խորհրդարանական ընտրությունների ընթացքում կուսակցություններն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր են ներկայացնում ՎԿԾ՝ քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:[51] Համաձայն ԸՕ-ի հոդված 28-ի մաս 4-ի՝ «Հանրապետության նախագահի թեկնածուների և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ներկայացրած հայտարարագրերը եռօրյա ժամկետում տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, իսկ մյուս թեկնածուների հայտարարագրերի պատճենները կարող են տրամադրվել վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, դիտորդներին»:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Արցախի 2020 թվականի խորհրդարանական ընտրություններին մասնակցած բոլոր կուսակցությունները պահպանել են ՎԿԾ նախընտրական հիմնադրամների մասին հայտարարագրեր ներկայացնելու օրենսդրական պահանջը և ներկայացրել են հայտարարագրեր[52]:

Նախընտրական քարոզչության ընթացքում Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելու, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար իրավունք ունի ծախսելու նվազագույն աշխատավարձի 30,000-ապատիկը չգերազանցող գումար,[53] այսինքն՝ 30,000,000 ՀՀ դրամ:

Օրենսդրության համաձայն հայտարարագրման ենթակա ծախսերի շրջանակը սահմանափակ է և դրանից դուրս են մնում այնպիսի կարևոր և խոշոր ծախսեր, ինչպիսիք են՝ շտաբների վարձակալությունը, շտաբների աշխատողների վարձը, տրանսպորտային ծախսերը, ինտերնետում արվող գովազդը և այլն[54]:

Ծախսերն ու ստացված գումարները գրեթե բոլոր քաղաքական ուժերի մոտ համարյա հավասար են, և այնպիսի տպավորություն է, որ գումարները մուծվել են հիմնադրամ,

[51] ԱՀ ԸՕ, հոդված 28, մաս 1
[52] https://bit.ly/37dde4T
[53] ԱՀ ԸՕ, հոդված 117, մաս 4
[54] Նույն տեղում, հոդված 27, մաս 1

որպեսզի հիմնավորեն արդեն իսկ կատարված կամ պայմանավորված ծախսերը: Նման պատկեր է առկա բոլոր կուսակցությունների մոտ՝ բացառությամբ «Անկախության սերունդի», որն ընդհանրապես որևէ ծախս չի կատարել և մուտք չի ունեցել:

Ստորև (Աղյուսակ 2 և Պատկեր 5) ներկայացված է կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում ներկայացված տվյալները: «Ընդհանուր ծախսերը» ներկայացնում են այն ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքների գումարը, որոնք ձեռք են բերվել անհատույց կամ նախընտրական հիմնադրամից ձևավորումից առաջ:

Աղյուսակ 2. Նախընտրական հիմնադրամների մուտքերն ու ծախսերը (ՀՀ դրամ)

Կուսակցություն/ կուսակցությունների դաշինք	Նախընտրական հիմնադրամ մուծված գումար	Նախընտրական հիմնադրամից կատարված ծախսեր	Ընդհանուր ծախսեր
«Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինք	17,814,000	17,813,284	17,813,284
«Միասնական հայրենիք» կուսակցություն	5,053,640	5,051,545	5,850,745
Արցախի «Արդարություն» կուսակցություն	5,230,000	5,230,000	5,230,000
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	3,868,008	3,868,008	3,868,008
Արցախի ժողովրդավարական կուսակցություն	4,570,000	2,830,780	4,550,780
«Նոր Արցախ» կուսակցությունների դաշինք	2,488,000	2,486,660	2,636,700
«Ազգային վերածնունդ» կուսակցություն	2,175,000	2,175,000	2,175,000
Արցախի պահպանողական կուսակցություն	383,000	190,000	382,700
Արցախի հեղափոխական կուսակցություն	66,000	66,000	66,000
«Միացյալ Հայաստան» կուսակցություն	300,000	282,000	282,000
«Անկախության սերունդ» կուսակցություն	0	0	0
Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն	456,600	456,600	456,600

Նախընտրական հիմնադրամներից կատարած ծախսերի ծավալի առումով առաջին երեք կուսակցություններն/կուսակցությունների դաշինքներն են՝ «Ազատ հայրենիք-ՔՄԴ», որին հաջորդում են Արցախի «Արդարություն» կուսակցությունը և «Միասնական հայրենիքը»՝

չնչին տարբերությամբ: Ամենից քիչ ծախսեր կատարած առաջին երեք կուսակցություններն են՝ «Անկախության սերունդը», որն ընդհանրապես ծախս չի հայտարարագրել, Արցախի հեղափոխական կուսակցությունը՝ 66,000 դրամ ծախսով և Արցախի պահպանողական կուսակցությունը՝ 190,000 դրամ ծախսով:

Ընդհանուր ծախսերի առումով՝ առաջին երեք տեղերում են նույն երեք կուսակցություններն՝ այն տարբերությամբ, որ «Միասնական հայրենիք» կուսակցությունը երկրորդ տեղում է, իսկ Արցախի «Արդարություն» կուսակցությունը՝ երրորդ: Քարոզչության ընթացքում կատարված նվազագույն ընդհանուր ծախսերի առումով, կրկին առաջին երկու տեղում են «Անկախության սերունդը»՝ 0 դրամ ծախսով և Արցախի հեղափոխական կուսակցությունը՝ 66,000 դրամ կատարած ծախսով: Երրորդ տեղում է ոչ թե Արցախի պահպանողական կուսակցությունն, այլ «Միացյալ Հայաստանը»:

Պատկեր 5. Նախընտրական հիմնադրամների մուտքերն ու ծախսերը (ՀՀ դրամ)



Ընտրություններում նվազագույն անցողիկ շեմը հաղթահարած կուսակցությունների հայտարարագրերը համադրելով ՎՎԾ նախընտրական հիմնադրամների ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ ամփոփ տեղեկանքի հետ[55]՝ պարզվում է, որ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» դաշինքը, «Արդարություն» կուսակցությունը և «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը տարբեր ժամանակահատվածներում կատարել են ծախսեր, մինչդեռ տվյալ պահին ծախսվածի չափով բավարար գումարներ չեն ունեցել հիմնադրամներում: Այսպես, ըստ «Ազատ հայրենիք- ՔՄԴ» դաշինքի հայտարարագրի՝ մարտի 13-ի դրությամբ հիմնադրամում առկա էր ընդամենը 2,000 ՀՀ դրամ գումար, սակայն մարտի 13-ին 43,200 ՀՀ դրամ հաշիվ-ապրանքագրով է դուրս գրվել: Նույն 2,000 ՀՀ դրամի

[55] https://bit.ly/30nbuEC

պայմաններում մարտի 24-ին դուրս է գրվել 8,845,000 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագիր, իսկ մարտի 27-ին՝ 3,097,900 ՀՀ դրամ: Համանման պատկեր է նաև «Արդարություն» կուսակցության դեպքում: Մարտի 18-26-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է 3,004,100 ՀՀ դրամի ծախս, այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածում հիմնադրամում եղել է ընդամենը 2,500,000 ՀՀ դրամ: Նույնն է իրավիճակը «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության դեպքում. մինչև մարտի 3-ը կատարվել է 1,612,220 ՀՀ դրամի ծախս, այն դեպքում, երբ մարտի 3-ի դրությամբ եղել է 291,000 ՀՀ դրամ: Այսինքն ստացվում է, որ գումարները մուտքագրվել են նախընտրական հիմնադրամներին՝ ելնելով կատարվող ծախսերից:

Նախընտրական հիմնադրամներից կատարված ծախսերի շրջանակում արտացոլված չեն այնպիսի գործարքներ, ինչպիսիք են, օրինակ՝ Արցախի «Արդարություն» կուսակցության կողմից մարտի 8-ի տոնի կապակցությամբ կանանց ծաղիկներ ու նվերներ բաժանելը,[56] «Ազատ հայրենիք-ՔՄԴ»[57] և Արցախի ժողովրդավարական կուսակցության ներկայացուցիչների կողմից մոմավառության նպատակով եկեղեցուց դուրս մոմեր բաժանելը,[58] «Ազատ հայրենիք-ՔՄԴ» կողմից COVID-19 համավարակի առիթով հիգիենայի պարագաների անվճար տրամադրումը Արցախ-Հայաստան անցակետում, քարոզչությանն առնչվող տարբեր ծառայությունների ձեռքբերումը (օրինակ՝ բարձրախոսի, մանր տեխնիկայի վարձակալություն և այլն), շտաբներում սննդի վճարները և այլն: Ընդ որում, եթե Արցախի ժողովրդավարական կուսակցության պարագայում դա տեսականորեն կարող էր ներառված լինել հիմնադրամի միջոցներից կատարված՝ հայտարարագրման ոչ ենթակա 1,720,000 ՀՀ դրամ ծախսի մեջ, մյուս քաղաքական ուժերի դեպքում այդպիսի ծախս չի հայտարարագրվել:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամի ծախսերի հայտարարագրերի վերլուծությունը վեր է հանել հայտարարագրվող ծախսերի ներկայացման բավականին անկազմակերպ և շփոթեցնող ձևաչափը: Բոլոր հայտարարագրերում ընդհանուր նշվել են 32 անուն ապրանք կամ ծառայություն: Չկան ընդհանուր դասակարգիչներ, ինչի արդյունքում կուսակցությունները միևնույն ապրանքը/ծառայությունը նշում են տարբեր անվանումներով, երբեմն էլ՝ անհասկանալի, ինչը դժվարացնում է համադրումը: Ի լրումն դրա, անհասկանալի են «ՄՀԶ» (ԿԸՀ բանավոր պարզաբանման համաձայն՝ ներառում է «մինչև հիմնադրամի ձևավորումն» արված ծախսերը), «ռադիոծառայություն» (ԿԸՀ բանավոր պարզաբանման համաձայն՝ ներառում է ռադիոեթերի վճարը), «պլաստիկ քարտեր», «ծառ. վճ-ում ժ-միջոցի համար» (ծառայությունների վճարում ժամանակամիջոցի համար) ծախսերը: Տարբեր ընկալումներ կարող են առաջանալ հայտարարագրված «գովազդային ծառայություն», «քարոզչական նյութեր» ձևակերպումների շուրջ:

Երեսուներկու ապրանքներն ու ծառայությունները դասակարգելով հնարավորինս համասեռ խմբերում՝ նախընտրական քարոզչության ծախսերը պայմանականորեն կարելի է ներկայացնել հետևյալ 10 խմբերում՝

---

56 https://www.facebook.com/BalasanyanVitali/photos/a.412907572847126/665826484221899/?type=3&theater

57 https://www.facebook.com/azathayrenik/photos/d41d8cd9/1939660159504140/

58 https://www.facebook.com/azathayrenik/photos/d41d8cd9/1928711190599037/

1. գրասենյակային պարագաներ, ներառյալ՝ գրասենյակային նյութեր և համակարգչային նյութեր.
2. տպագրական նյութեր, ներառյալ՝ քարոզչական պաստառների, բրոշյուրների, բուկլետների, գրքույկների, թռուցիկների, բաներների, թաց անձեռոցիկների և այլ դիզայն և տպագրություն.
3. տրանսպորտային ծառայություն.
4. վառելիք, ներառյալ՝ դիզելային վառելիք, վառելիք, բնական գազ և բենզին.
5. գովազդային վահանակներ, ներառյալ՝ գովազդային վահանակների տեղադրում, վարձակալություն, գովազդի տեղադրում.
6. վճարովի եթեր.
7. տեսահոլովակ.
8. բուկլետների բաժանում-ցրիչ.
9. փողոցային լույս.
10. «անորոշ» ծառայություններ և ապրանքներ, ներառյալ՝ «ՄՀԶ», գովազդային ծառայություն, քարոզչական նյութեր, ռադիոծառայություն, պլաստիկ քարտեր, «Ծառ. վճ-ում Ժ-միջոցի համար»:

Ըստ վերոնշյալ տասը խմբերի՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներից կատարած ծախսերի ընդհանուր պատկերը ներկայացվում է ստորև:

Պատկեր 6. Նախընտրական հիմնադրամներից կատարած ծախսերը (ՀՀ դրամ)



Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինքն ամենից շատ գումարն է ծախսել տպագրական նյութերի՝ մոտ 8,200,000 ՀՀ դրամ,

գովազդային վահանակների՝ 1,800,000 ՀՀ դրամ և «անորոշ» խմբի ծառայությունների/ապրանքների համար՝ 4,800,00 ՀՀ դրամ: Վճարովի եթերի համար «Ազատ հայրենիք-ՔՄԴ» դաշինքը և «Միասնական հայրենիք» կուսակցությունը ծախսել են գրեթե հավասար՝ համապատասխանաբար 527 և 518 հազարական ՀՀ դրամ: Երկու կուսակցություններն էլ, օգտվելով օրենքով տրված հնարավորությունից, չեն հայտարարագրել տրանսպորտային, վառելիքի, շտաբների վարձակալության, ինչպես նաև սոցիալական ցանցերում գովազդի ծախսեր:

Միայն երեք կուսակցություն է հայտարարագրել գովազդային վահանակների ծախսեր, մինչդեռ ըստ «Ականատեսի» դիտորդների՝ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և դաշինքները, բացառությամբ՝ «Արցախի հեղափոխական» կուսակցության, ունեցել են վահանակներ: «Ականատեսը» մեկ քառակուսի մետրը 2,500 դրամ միջին գնով հաշվարկել է գովազդային վահանակիների ծախսերը, որից երևում է, որ զգալի գումարներ են ծախսվել դրանց տեղադրման համար (Աղյուսակ 3.): Կարելի է ենթադրել, որ գովազդային վահանակների ծախսերը հայտարարագրերում ներառվել են, սակայն ներկայացվել են այլ անվանումներով, օրինակ՝ տպագրական նյութեր, բանների տպագրություն, քարոզչական պաստառներ, գովազդի տպագրություն, բայց ոչ վահանակներ: Այդուհանդերձ ակնհայտ է, որ ծախսերի դասակարգման անհստակությունը ինչպե՛ս ՎՎԾ-ի համար, այնպե՛ս էլ դիտորդական առաքելության տեսանկյունից դժվարացնում է վերահսկողությունը:

Աղյուսակ 3. Գովազդային վահանակների թիվ և արժեք (ՀՀ դրամ)

Կուտակություն (կուսակցությունների դաշինք)	Դիտորդների արձանագրած՝ գովազդային վահանակների թիվ	Վահանակների հաշվարկված ծախս՝ ընդամենը
«Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինք	159 վահանակ՝ միջինը 6.5 քմ 95 վահանակ միջինը 10.5 քմ	5,077,500
«Միասնական հայրենիք» կուսակցություն	49 վահանակ՝ միջինը 6.5 քմ 31 վահանակ՝ միջինը 10.5 քմ	1,610,000
Արցախի «Արդարություն» կուսակցություն	79 վահանակ՝ միջինը 6.5 քմ 28 վահանակ՝ միջինը 10.5 քմ	2,018,750
«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	33 վահանակ՝ միջինը 6.5 քմ 29 վահանակ՝ միջինը 10.5 քմ	1,297,500
Արցախի ժողովրդավարական կուսակցություն	128 վահանակ՝ միջինը 6.5 քմ 67 վահանակ՝ միջինը 10.5 քմ	3,838,750
«Նոր Արցախ» կուսակցությունների դաշինք	151 վահանակ՝ միջինը 6.5 քմ 82 վահանակ՝ միջինը 10.5 քմ	3,786,250
«Ազգային վերածնունդ» կուսակցություն	38 վահանակ՝ միջինը 6.5 քմ 12 վահանակ՝ միջինը 10.5 քմ	932,500
Արցախի պահպանողական կուսակցություն	26 վահանակ՝ միջինը 6.5 քմ 9 վահանակ միջինը 10.5 քմ	658,750
Արցախի հեղափոխական կուսակցություն	0 ՀՀ դրամ	0
«Միացյալ Հայաստան» կուսակցություն	70 վահանակ՝ միջինը 6.5 քմ 15 վահանակ՝ միջինը 10.5 քմ	2,161,250
«Անկախության Սերունդ» կուսակցություն	64 վահանակ՝ միջինը 6.5 քմ 15 վահանակ՝ միջինը 10.5 քմ	1.433.750
Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն	6 վահանակ՝ միջինը 6.5 քմ	97,500

Հարկ է արձանագրել, որ գովազդային վահանակների մասին հայտարարագրող երեք քաղաքական ուժերի՝ «Ազատ հայրենիք-ՔՄԴ», «Միասնական հայրենիք» և Արցախի ժողովրդավարական կուսակցության հայտարարագրած ծախսերը շատ ավելի քիչ են քան «Ականատեսի» կողմից հաշվարկածը (Պատկեր 7.): Այսպես՝ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» դաշինքը հայտարարագրել է 1,800,000 ՀՀ դրամ գովազդային վահանակների մասով, իսկ

դիտորդական առաքելությունը վեր է հանել մոտ 5,077,500 ՀՀ դրամի ծախս, «Միասնական հայրենիքի» դեպքում հայտարարագրվել է 144,000 ՀՀ դրամ, իսկ ըստ «Ականատեսի»՝ այդ գումարը կազմում է մոտ 1,610,000 ՀՀ դրամ, Արցախի ժողովրդավարական կուսակցությունը հայտարարագրել է 100,540 ՀՀ դրամի ծախս, իսկ «Ականատեսի» հաշվարկներով՝ այդ թիվը կազմում է մոտ 3,838,750 ՀՀ դրամ:

Պատկեր 7. Վահանակների իրական և հայտարարագրված վճարները (ՀՀ դրամ)



Ի լրումն վերոնշյալ համադրումների, հաշվի առնելով, որ նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի հայտարարագրերը ամբողջությամբ չեն արտացոլում նախընտրական շրջանում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ծախսերը, դիտորդական առաքելության կողմից ուսումնասիրվել են օրենքով նախընտրական հիմնադրամում պարտադիր չներառվող և հայտարարագրման ոչ ենթակա՝ կուսակցությունների նախընտրական շտաբների վարձակալության ծախսերը, ինչպես նաև՝ շտաբներում ընդգրկված աշխատողների վարձատրության գումարները: Տվյալ ուսումնասիրության հիմնական նպատակն էր՝ հասկանալ այդ ծախսերի ծավալները և դրանց էականությունը քարոզարշավի ընդհանուր ծախսերի համատեքստում՝ անկախ այն հանգամանքից, թե դրանցից որոնք են ֆինանսապես փոխհատուցվել և որոնք՝ հանդիսացել ոչ նյութական ներդրում առանձին անձանց կողմից: Հաշվարկները կատարվել են՝ ստանդարտացնելով ծախսերը՝ շտաբների վարձակալության համար նախատեսելով գրասենյակային տարածքի միջին շուկայական արժեքը՝ 70,000 ՀՀ դրամ և աշխատանքի վարձատրության համար՝ ԱՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձը՝ 75,000 ՀՀ դրամ: Ընդ որում, հաշվարկը կատարվել է մեկ ամսվա համար՝ չնայած, որ նախընտրական շտաբները գործել են 2020 թվականի փետրվարի 26-ից առվազն մինչև մարտի 31-ը, իսկ որոշ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) դեպքում՝ առնվազն մինչև ապրիլի 14-ը՝ հաշվի առնելով նախագահական ընտրությունների երկրորդ փուլում նրանց ներգրավումը:

Առավելագույն ձայներ ստացած երեք քաղաքական ուժերից՝ իրենց ընտրական շտաբների և ներգրավված աշխատողների վերաբերյալ տեղեկություններ «Ականատեսին» հաղորդել է միայն «Միասնական հայրենիք» կուսակցությունը: Այն ունեցել է 67 շտաբ և 194 աշխատող

(յուրաքանչյուր շտաբում մոտավորապես՝ 3-ական աշխատող), ինչը ֆինանսական արտահայտությամբ մոտավորապես կարժենար 19,240,000 ՀՀ դրամ: Դիտորդների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են «Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի՝ 112 և Արցախի «Արդարություն» կուսակցության՝ 14 շտաբ: Դրանցից յուրաքանչյուրի համար հաշվարկելով շտաբների վարձակալության արժեքը և նախատեսելով նվազագույնը մեկական աշխատող, ստացվում է, որ առաջինի ծախսերը կազմում են մոտ 16,240,000 ՀՀ դրամ, իսկ երկրորդինը՝ մոտ 2,030,000 (Աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Նախընտրական շտաբների և աշխատակիցների վճարներ (ՀՀ դրամ)

Կուսակցություն / կուսակցությունների դաշինք	Շտաբների / աշխատողների քանակ	Շտաբների / աշխատողների համար ծախսեր	Ընդամենը՝ շտաբների և աշխատողների համար ծախսեր	Հայտարարագրված ընդհանուր ծախսեր	Շտաբների/ աշխատողների ծախսերի համադրությունը հայտարարագրված ծախսերի հետ
«Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինք	112 շտաբ	7,840,000	16,240,000	17,813,284	91.2%
	112 աշխատող/ կամավոր	8,400,000			
«Միասնական հայրենիք» կուսակցություն	67 շտաբ	4,690,000	19,240,000	5,850,745	330%
	194 աշխատող/ կամավոր	14,550,000			
Արցախի «Արդարություն» կուսակցություն	14 շտաբ	980,000	2,030,000	5,230,000	38.8%
	14 աշխատող/ կամավոր	1,050,000			

Ստացվում է, որ «Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինքը իր շտաբների և աշխատողների ծախսերի վրա ծախսել է առնվազն այնքան գումար, որքան նրա հայտարարագրած ընդհանուր ծախսն է՝ 17,813,284 ՀՀ դրամ: «Միասնական հայրենիք» կուսակցությունը ծախսել է երեք անգամ ավելի մեծ գումար քան հայտարարագրած ընդհանուր ծախսն է: Արցախի «Արդարություն» կուսակցության պարագայում շտաբների և աշխատողների վրա ծախսված գումարը մոտավորապես կազմում է ընդհանուր ծախսերի 2/5-ը: Միայն «Ազատ հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի և «Միասնական հայրենիք» կուսակցության օրինակները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ օրենսդրությամբ նախընտրական հիմնադրամում շտաբների ու աշխատողների ծախսերի չներառելու դրույթը խոչընդոտում է, որպեսզի լիարժեք կերպով բացահայտվեն քաղաքական ուժերի կատարած մեծածավալ ծախսերը, ինչպես նաև համապատասխան մուտքերը/ներդրումները, և դրանով թյուր պատկերացումներ են ստեղծում ներդրված

միջոցների, մրցակցային իրավիճակի և ընտրությունների արդյունքների վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Նախընտրական քարոզարշավի բարձր ակտիվության պատճառով դիտորդների համար հնարավոր չի եղել ամբողջական և հավաստի տվյալներ հավաքագրել կուսակցությունների/դաշինքների կողմից տրանսպորտային ծառայությունների, վառելիքի ծախսերի վերաբերյալ, որոնք ևս զգալի գումար են կազմում և դուրս են մնացել հայտարարագրերից:

3.4.3. Վերահսկողություն

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն: Նրա լիազորությունները սահմանված են ԱՀ ընտրական օրենսգրքով և «Կուսակցությունների մասին» օրենքով: ՎՎԾ ղեկավարը նշանակվում է ԿԸՀ կողմից 5 տարի ժամկետով:[59]

Նախագահական և խորհրդարանական ընտրությունների ընթացքում թեկնածուներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր են ներկայացնում են ՎՎԾ՝ քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:[60] Հայտարարագրերին կցվում են թեկնածուների՝ զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելու, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կնքված պայմանագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը:

Եթե ապրանքներն ու ծառայությունները մատուցվել են անհատույց կամ շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում[61]: Եթե ՎՎԾ եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար ձեռքբերված ապրանքը կամ ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա ԿԸՀ-ն հարուցում է վարչական վարույթ, և, եթե դրա արդյունքում հիմնավորվում է ՎՎԾ եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով:[62]

Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, Հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին

[59] ԱՀ ԸՕ, հոդված 29, մաս 2
[60] Նույն տեղում, հոդված 28, մաս 1
[61] Նույն տեղում, հոդված 27, մաս 2
[62] Նույն տեղում, հոդված 27, մաս 2

մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ, ՎՎԾ-ին տեղեկանք են ներկայացնում նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ, որը ՎՎԾ-ն պարտավոր է ամփոփել, կազմել ամփոփ տեղեկանք և տեղադրել ԿԸՀ կայքում:[63]

ՎՎԾ-ն հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ ստուգում է, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում ԿԸՀ:[64] Այդ պահից սկսած ԿԸՀ-ն պարտավոր է այն անհապաղ հրապարակել իր կայքում և առկայության դեպքում, քննարկել եզրակացության մեջ արձանագրված խախտումները, որի համար հրավիրում է նիստ՝ ՎՎԾ ներկայացուցչի պարտադիր ներկայությամբ:

ՎՎԾ լիազորությունները սահմանված են ընտրական օրենսգրքի հոդված 29-ի 6-րդ մասում և ներառում են հետևյալը՝

1. ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ Հանրապետության նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ այն բանկերից, որտեղ նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ.
2. բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցությանը վճարված անդամակցության վճարների, կուսակցությանը կատարված նվիրատվությունների, բյուջետային ֆինանսավորման, քաղաքացիական իրավական գործարքներից ստացված դրամական միջոցների և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերի և ծախսերի վերաբերյալ.
3. իր գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել որոշումների նախագծեր և դրանք ներկայացնել ԿԸՀ քննարկմանը:

Նշված լիազորություններից երկրորդի առնչությամբ առկա է որոշակի բաց, քանի որ ՎՎԾ-ն չի կարող ստանալ տեղեկություններ ֆիզիկական անձանցից և պետական մարմիններից և այդպիսով՝ համադրել ու վերլուծել կազմակերպություններից ստացվող տեղեկությունները:

Կանխիկ գործարքների սահմանափակումների և դրանց նկատմամբ վերահսկողական մեխանիզմների բացակայությունն իր հերթին առաջացնում է չարաշահումների բարձր ռիսկեր:

[63] Նույն տեղում, հոդված 26, մաս 7
[64] Նույն տեղում, հոդված 29, մաս 5

Թեև ըստ օրենքի ՎՎԾ-ն գործում է ընտրական հանձնաժողովներից անկախ և հաշվետու չէ նրանց,[65] ինչպես երևում է վերոնշյալից, այն ունի զգալի կախվածություն ԿԸՀ-ից ինչպե՛ս ինստիտուցիոնալ, այնպե՛ս էլ գործառնական առումներով: Նաև, այն չի հանդիսանում կարգավորիչ կամ պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին: Նրա գործառույթների սահմանափակ լինելը, ինչպես նաև որոշակի կախվածությունը հնարավորություն չեն տալիս իրականացնել լիարժեք, բովանդակային ու արդյունավետ վերահսկողություն:

2020թ. մարտի 31-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ ԱՀ ԿԸՀ ՎՎԾ եզրակացությունն ամրագրել է, որ «...որոշ թեկնածուներ և կուսակցություններ հայտարարագրերը ներկայացրել են ուշացումներով, ոչ պատշաճ ձևով որոշակի թերացումներով, որոնք վերահսկիչ-վերստուգիչ ծառայության մասնագետների կողմից շտկվել են»: Ըստ եզրակացության, նախընտրական հիմնադրամների ձևավորման, մուտքերի և ելքերի առումով կոպիտ խախտումներ չեն արձանագրվել:[66] ՎՎԾ-ի իրականացրած ուսումնասիրությունը ակնհայտորեն խիստ տեխնիկական ու մակերեսային է և, օրինակ, առնվազն դասակարգումների շփոթի արդյունքում վերևում նկարագրված՝ գովազդային վահանակների չհայտարարագրված ծախսերը չի կարողացել բացահայտել:

3.5. Քվեարկության օրվա դիտարկում

«Ականատես» դիտորդական առաքելության նախնական գնահատմամբ՝ 2020թ. մարտի 31-ին Արցախի Հանրապետությունում կայացած նախագահական և խորհրդարանական ընտրությունների քվեարկությունն ընթացել է մասամբ լարված մթնոլորտում: Գրանցվել է ընտրողների մասնակցության բավականին բարձր՝ շուրջ 73% ցուցանիշ: Բազմաթիվ տարերային խախտումների հետ միաժամանակ տեղ են գտել մի շարք կրկնվող երևույթներ, որոնք հիմք են տալիս ենթադրել, որ դրանք եղել են միտումնավոր և կազմակերպված: Ակնհայտորեն որոշ ընտրողների կամարտահայտումը չի եղել ազատ, վերահսկվել է, ինչը կարող էր ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

«Ականատեսի» կողմից դիտարկված տեղամասերում քվեարկության գործընթացը, հիմնականում, կազմակերպված էր պատշաճ կերպով: Մոտ 20 տեղամասում հայտնաբերվել են կահավորման հետ կապված խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են եղել քվեարկության սենյակների և/կամ շենքային պայմանների անհամապատասխանությամբ: Համայնքներից մեկում ընտրատեղամասը տեղակայված է եղել հանդիսությունների սրահում, որը գտնվում էր համայնքապետարանի շենքում՝ չնայած այն հանգամանքին, որ համայնքում առկա էին այլ հարմար տարածքներ քվեարկությունը կազմակերպելու համար: Մի շարք տեղամասերում եղել է վատ լուսավորություն, բացակայել է չիրկիզվող պահարանը, գրանցվել է քվեախցիկների սխալ տեղակայում՝ գաղտնիության խախտման ռիսկեր, բացակայել է ընտրատեղամասի կնիքը: Այնուամենայնիվ, առաքելության ընդհանուր գնահատմամբ, նշված թերությունները չեն ունեցել հատուկ միտում:

Հանձնաժողովի անդամները, հիմնականում, կարգապահորեն կատարել են իրենց պարտականությունները: Եղել են եզակի դեպքեր, երբ հանձնաժողովի նախագահը ոչ

[65] Նույն տեղում, հոդված 29, մաս 1
[66] https://bit.ly/2AMvFkK

համագործակցային վերաբերմունք է դրսևորել դիտորդների նկատմամբ: Երբեմն խախտվել են հանձնաժողովի անդամների և վստահված անձանց՝ օրենքով սահմանված գործառույթները, գրանցամատյանը լրացվել է թերի, քվեաթերթիկների դարձերեսին բացակայել են հանձնաժողովի երեք անդամների ստորագրությունները, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ որոշ քվեաթերթիկներ անհիմն կերպով ճանաչվել են անվավեր: Հանդիպել են վիճակահանությամբ հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման կարգի պահպանման հետ կապված խնդիրներ: Որոշ դեպքերում, պայմանավորված հանձնաժողովի նախագահի ցածր պատրաստվածությամբ՝ նկատվել է քվեարկության գործընթացի անբավարար որակի կազմակերպում:

Ոստիկանությունը, հիմնականում, ապահովել է հասարակական կարգը, թեև եղել են դեպքեր, երբ ոստիկանները ներկա են գտնվել ընտրատեղամասում՝ առանց պատշաճ հիմնավորման:

Ընտրատեղամասերում քվեարկության գործընթացի հեռարձակման օնլայն հսկողության արդյունքներով՝ դիտարկված 46 տեղամասերից մոտ 10-ում նկատվել են հեռարձակման պարբերաբար խափանումներ՝ գումարային մի քանի ժամ տևողությամբ: Հեռարձակման որակի խնդիրներ են նկատվել դիտարկվող տեղամասերի համարյա կեսում: Մի դեպքում տեղամասի հեռարձակումը փաստացի կրկնել է մեկ այլ տեղամասի եթերը: Եղել են դեպքեր, երբ խնդիրների ծագման պարագայում, տեսախցիկների հեռավորությունը հանձնաժողովի անդամների սեղաններից թույլ չի տվել լիարժեք կերպով հետևել համապատասխան քննարկումներին և լիարժեքորեն ընկալել խնդիրների բնույթը: Հեռարձակումը տեխնիկապես հնարավորություն չի տվել վերադիտել և ստուգել տեսանյութում նկատված խնդրահարույց դրվագները:

Հակառակ COVID-19 պայմաններում կազմակերպվող ընտրությունների ռիսկերի առնչությամբ «Ականատեսի» արտահայտած մտահոգություններին՝ ընտրողների մասնակցությունը բավականին բարձր էր և ակտիվ: Ձեռնարկվել էին անվտանգության միջոցառումներ, և դիտարկված բոլոր տեղամասերում քվեարկության գործընթացի բոլոր մասնակիցներին բաժանվել են հիգիենիկ պաշտպանության միջոցներ ու գրիչներ, թեև ոչ բոլորն էին կրում կամ գործածում դրանք: Չնայած այն հանգամանքին, որ COVID-19-ի վտանգներից ելնելով Արցախի ԿԸՀ-ն հայտարարել էր, որ ընտրատեղամասերում պահպանվելու է միաժամանակ մինչև 20 հոգու ներկայության պահանջը, քվեարկության ընթացքի դիտարկումները ցույց են տվել, որ մի շարք ընտրատեղամասերում միաժամանակ ներկա են եղել մոտ 30 հոգի, ինչն էլ ավելի է մեծացրել համավարակի տարածման վտանգը:

Շրջիկ դիտորդության և հեռարձակումների միջոցով բացահայտված հիմնական խնդիրները ներառել են հետևյալը.

- Ուղղորդման դեպքեր, երբ կողմնակի անձինք ուղղորդել են ընտրողներին կամ վստահված անձը փորձել է հավաստիանալ ընտրողների «ճիշտ քվեարկության մեջ».
- Քվեարկության գաղտնիության խախտում, երբ ընտրողները քվեաթերթիկները ծալել են դրսում կամ քվեախցում քվեարկել են մի քանի հոգով.
- Ակտիվ քարոզչություն, որը դրսևորվել է կուսակցությունների պիտակներով մեքենաների՝ տեղամասերի մոտ տեղակայմամբ, քարոզչություն՝ քվեարկելու «թիվ 6» թեկնածուին, քարոզչություն «Ազատ հայրենիք» կուսակցության շապիկով.

- Մարդկանց կուտակումներ՝ դիտարկված տեղամասերից 47-ում, ինչպես նաև բազմաթիվ կողմնակի անձանց ներկայություն ընտրատեղամասում կամ դրա հարակից տարածքում.
- Հանձնաժողովի անդամների կամ քվեարկության այլ մասնակիցների ներգրավմամբ խախտումներ:

Վերջին տիպի խախտումների մասով հիշատակման են արժանի հատկապես հետևյալ դեպքերը՝

- Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ գյուղում տեղակայված 6/10 տեղամասում հանձնաժողովի նախագահը հետևողաբար խոչընդոտել է դիտորդի աշխատանքներին և թույլ չի տվել ծանոթանալ տեղամասի գրանցամատյանին.
- Ստեփանակերտում տեղակայված 1/17 տեղամասում հանձնաժողովի նախագահը քվեախցիկի մոտ ընտրողներին ձեռքով ցույց է տվել, թե ում ընտրեն: Նույն տեղում «Նոր Արցախ» դաշինքի վստահված անձը մի քանի անգամ կանգնել է քվեախցիկների հետնամասում և հետևել ընտրողների քվեարկությանը.
- Մարտակերտ քաղաքում տեղակայված 4/2 տեղամասում 14:30-14:45-ին տեսախցիկով նկատվել է լցոնման հնարավոր դեպք, որը, սակայն, հնարավոր չի եղել ստուգել տեսանյութի վերանայման անհնարինության պատճառով:

Վերոնշյալ ցրված կամ դրվագային խախտումների համատեքստում համեմատաբար ավելի արտառոց և ուշագրավ է եղել բազմաթիվ ընտրողների կողմից քվեարկած քվեաթերթիկները լուսանկարելու երևույթը, որոնց մեծամասնությունը, ինչպես պարզվել է դիտարկման արդյունքում, քվեարկած են եղել Արայիկ Հարությունյանի կամ «Ազատ հայրենիք» կուսակցության օգտին:

Ընդհանուր առմամբ, 2020թ. մարտի 31-ին Արցախի Հանրապետությունում կայացած համապետական ընտրությունների քվեարկությունն ընթացել է որոշակիորեն լարված մթնոլորտում: Խախտումների մեծ մասը եղել է դրվագային, բայց մի շարք երևույթների, մասնավորապես՝ արդեն քվեարկված քվեաթերթիկների լուսանկարահանման պրակտիկան հիմք են տալիս ենթադրել, որ դրանք եղել են կազմակերպված: Բազմաթիվ ընտրողների կամարտահայտումը չի եղել ազատ, այլ վերահսկվել է որոշ քաղաքական ուժերի կողմից, ինչը կարող էր ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

3.6. Հետընտրական գործընթացներ

Նախագահական ընտրությունների առաջին փուլում հաղթելու համար նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանին չի բավարարել մեկ տոկոսից պակաս ձայն և, ԱՀ ընտրական օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն, 2020թ. ապրիլի 14-ին տեղի է ունեցել նախագահական ընտրությունների երկրորդ փուլ՝ առաջին փուլում առավելագույն ձայներ ստացած թեկնածուների՝ Արայիկ Հարությունյանի և Մասիս Մայիլյանի մասնակցությամբ:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլին հարկ է անդրադառնալ՝ հաշվի առնելով համապետական ընտրությունների հետընտրական որոշ զարգացումներ: Մասնավորապես, առաջին փուլից հետո՝ ապրիլի 5-ին և ապրիլի 11-ին, մի քանի ընդդիմադիր քաղաքական ուժեր կազմակերպել են ընտրությունների արդյունքների չեղարկման, ԱՀ նախագահ Բակո

Սահակյանի հրաժարականի, քրեաօլիգարխիկ ռեժիմի դեմ պայքարի, արտակարգ դրության հաստատման և նոր ընտրությունների անցկացման պահանջներով խաղաղ հավաքներ: Հավաքներին մասնակցել են մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր քաղաքացիներ:

Այդուհանդերձ, չնայած ընտրությունների որակի և արդյունքների արժանահավատության վերաբերյալ մամուլում հնչեցրած բազում դժգոհություններին, թեկնածուներից և կուսակցություններից որևէ մեկը չի բողոքարկել մարտի 31-ին կայացած ընտրությունների արդյունքները, չեն ներկայացվել դրանք անվավեր ճանաչելու կամ վերահաշվարկի դիմումներ:

Ապրիլի 3-ին ԿԸՀ կողմից կազմվել է ընտրությունների արդյունքների վերաբերյալ վերջնական արձանագրություն[67], որում ԱԺ վեցերորդ գումարման ընդդիմադիր «Ազգային վերածնունդ» կուսակցության կողմից նշանակված ԿԸՀ անդամն հայտնել է ընտրությունների արդյունքները չընդունելու մասին հատուկ կարծիք՝ որպես այդ դիրքորոշման հիմնավորում վկայակոչելով դիտորդական առաքելությունների զեկույցները:

Հանրապետության նախագահի երկրորդ փուլի ընտրությունների նախընտրական քարոզարշավը պաշտոնապես մեկնարկել է ընտրության երկրորդ փուլ անցկացնելու մասին որոշման կայացմանը հաջորդող երկրորդ օրը՝ ապրիլի 8-ին: Սակայն, ըստ էության, թեկնածուները չեն իրականացրել նախընտրական քարոզչություն՝ դրանով իսկ ակնհայտորեն ոչ մրցակցային դարձնելով նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Ավելին, նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանը փաստացի բոյկոտել է ընտրությունների երկրորդ փուլը և կոչ արել ընտրողներին կորոնավիրուսի համավարակի՝ գնալով ահագնացող վտանգի պայմաններում չմասնակցել երկրորդ փուլի քվեարկությանը: Չնայած ընտրություններին չմասնակցելու և դրանք բոյկոտելու Մասիս Մայիլյանի որոշմանը՝ վերջինիս անունն, այդուհանդերձ, առկա է եղել քվեաթերթիկում՝ ԱՀ ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածի հինգերորդ կետով սահմանված ժամկետում ինքնաբացարկի դիմում չներկայացնելու հետևանքով:

Հատկանշական է, որ Արայիկ Հարությունյանն, իր հերթին, կորոնավիրուսի վտանգով պայմանավորված՝ կոչ էր արել տարեցներին և խրոնիկ հիվանդություններ ունեցող ընտրողների չմասնակցել քվեարկությանը: Սակայն, հարկ է նշել, որ մեր դիտարկումները ցույց տվեցին, որ ընտրությունների մասնակիցների մեջ զգալի թիվ էին կազմում հենց տարեցները, որոնց թվում շատ էին դժվարությամբ տեղաշարժվող անձինք:

Երկրորդ փուլի ընտրությունները տեղի են ունեցել ապրիլի 12-ին ԱՀ-ում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ արգելված էին զանգվածային միջոցառումները, որի պատճառով, օրինակ, ընտրություններից հետո հանրությունը զրկվել էր ընտրությունների վերաբերյալ իր դիրքորոշումը որևէ հրապարակային ակցիայի միջոցով հայտնելու հնարավորությունից: Երկրորդ փուլի մասնակիցներից մեկի՝ ընտրությունները բոյկոտելու հետևանքով ընտրապայքար չի իրականացվել, որևէ բանավեճ տեղի չունեցել թեկնածուների և նրանց ներկայացնող քաղաքական ուժերի միջև: Նախագահի թեկնածուների միջև Հանրային հեռուստաընկերության կողմից նախօրոք ծրագրված

[67] http://cecnkr.am/wp-content/uploads/2020/04/%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B61.pdf

հեռուստաբանավեճի փոխարեն տեղի է ունեցել Արայիկ Հարությունյանի և Արցախի Հանրային հեռուստաընկերության լրագրողի միջև հարցազրույց:

Ապրիլի 14-ին տեղի ունեցած քվեարկությանը մասնակցել է ընտրողների 44.9%-ը, քվեարկության արդյունքում գրանցվել են հետևյալ արդյունքները.

Պատկեր 8.



Թեև ընտրությունների վերաբերյալ հնչեցրած բացասական գնահատականների՝ երկրորդ փուլի արդյունքները նույնպես չեն բողոքարկվել:

Ինչպես արդեն նշվեց վերևում, ԱՀ նախագահական ընտրությունների երկրորդ փուլն անց է կացվել ՀՀ-ում գործող արտակարգ դրության և ԱՀ-ում գործող արտակարգ իրավիճակի պայմաններում, ինչի հետևանքով «Ականատես» նախաձեռնությունը ստիպված է եղել դիտարկել այն խիստ սահմանափակ առաքելության շրջանակներում: Մասնավորապես, 48 տեղամասերում իրականացվել է ընտրությունների ընթացքի ուղիղ հեռարձակման վիդեոմոնիտորինգ 23 դիտորդների մասնակցությամբ, կատարվել են այցեր տեղամասային կենտրոններ առաքելության 8 շրջիկ դիտորդների կողմից, ինչպես նաև քվեարկության օրվա ընդհանուր մթնոլորտի ուսումնասիրության նպատակով տեղի են ունեցել հանդիպումներ ընտրական գործընթացի տարբեր մասնակիցների հետ: Չնայած դիտարկումների արդյունքում էական խախտումներ չեն արձանագրվել, սակայն դրանք չեն փոխանցում գործընթացի ամբողջական պատկերը՝ բովանդակային և ծավալի իմաստով բավարար ներկայացվածություն չունենալու պատճառով: Ուստի առաքելություն զերծ է մնում ԱՀ նախագահական ընտրությունների երկրորդ փուլի քվեարկության օրվա վերաբերյալ գնահատական արձանագրելուց՝ սահմանափակվելով ընդհանուր բնույթի դիտարկումներով:

Այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ արտակարգ իրավիճակում և ընտրություններին թեկնածուներից մեկի փաստացի չմասնակցելու պայմաններում իրականացված ընտրությունները չեն կարող մրցակցային համարվել և չեն կարող լիարժեք կերպով արտացոլել ընտրողների կամքը:

Ավելի սահմանափակ թվով են հանդես եկել նաև ԿԸՀ կողմից հավատարմագրված այլ դիտորդական խմբերը և ՁԼՄ ներկայացուցիչները, ինչի արդյունքում հնարավոր չի եղել ապահովել քվեարկության թափանցիկության և հրապարակայնության բարձր մակարդակ:

3.7. Դիմումների, բողոքների և հաղորդումների ընթացքը

ԱՀ համապետական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում և քվեարկության օրը իրավապահ մարմինների կողմից դիմում-բողոքների, ահազանգերի և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների հիման վրա քննության է առնվել հանցագործության և այլ իրավախախտումների վերաբերյալ ընդհանուր 78 հաղորդում, որոնց հիմքերը ներկայացված են Պատկեր 9-ում[68]:

Պատկեր 9.



Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում արձանագրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից քարոզչություն կատարելու երկու դեպք՝ Մարտունու ընտրատարածքի թիվ 5/1 և թիվ 5/10 տեղամասերում, որոնց վերաբերյալ առաքելության կողմից դիմում-բողոքներ են ներկայացվել ինչպես ՏարԸՀ, այնպես էլ ԿԸՀ՝ խախտում թույլ տված հանձնաժողովների նախագահներին պատասխանատվության ենթարկելու նպատակով: Սակայն դիմում-բողոքների հիման վրա վարչական վարույթներ չեն հարուցվել և խախտում կատարած անձինք որևէ պատասխանատվության չեն ենթարկվել վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից: Թիվ 5/10 տեղամասի մասով տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները բողոքարկվել են ԿԸՀ, որի վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել:

Քվեարկության օրը արձանագրված էական խախտումների հիման վրա առաքելության կողմից դիմում-բողոքներ են ներկայացվել Ստեփանակերտի (թիվ 1) և Մարտունու (թիվ 5) տարածքային ընտրական հանձնաժողովներ: Բողոքները վերաբերել են վստահված անձի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի պարտականությունները կատարելու (թիվ 1/2 տեղամաս), տեղամասային հանձնաժողովի նախագահի կողմից

[68] https://prosecutornk.am/78-հաղորդում՝-20-04-2020թ-դրությամբ/

քվեարկության գաղտնիության խախտման (թիվ 1/17 տեղամաս) և հանձնաժողովի նախագահի կողմից գրանցամատյանում չօգտագործված քվեաթերթիկների քանակի ակնհայտ սխալ լրացման (թիվ 5/1 տեղամաս) դեպքերին: Երկու բողոքների դեպքում տարածքային հանձնաժողովները վարչական վարույթ չեն հարուցել: Թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է ԿԸՀ:

Դիտորդական առաքելության կողմից ընտրական գործընթացում արձանագրված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են ընդհանուր առմամբ 4 դիմում-բողոք ՏարԸՀ և 1 բողոք ԿԸՀ: Ներկայացվել է նաև թվով 3 հաղորդում հանցագործության մասին, որոնցից երկուսը վերաբերել են Մարտունու քաղաքապետի և մի շարք այլ անձանց կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններից մեկ՝ Արցախի հեղափոխական կուսակցության նախընտրական քարոզչության իրականացմանը խոչընդոտելու դեպքերին, իսկ երրորդը՝ թեկնածու Արայիկ Հարությունյանի օգտին քվեարկելու համար ընտրակաշառք տալու/բարեգործություն իրականացնելու դեպքերին (2018-2020թթ. ընթացքում Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում Արցախի բնակչությանը տրամադրվել են պետական սուբսիդավորմամբ վարկեր բնակելի տարածքների կամ բնակարանների վերանորոգման նպատակով՝ ԱՀ նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի օգտին քվեարկելու պայմանով:): Առաջին երկու հաղորդումների հիման վրա հարուցվել է քրեական գործ և ըստ ԱՀ դատախազության՝ Մարտունի քաղաքի քաղաքապետ Հայկ Սարգսյանին առաջադրվել է մեղադրանք: Ինչ վերաբերում է երրորդ հաղորդմանը՝ ապա դրա մասով քրեական գործի հարուցումը մերժվել է 2020թ. մայիսի 26-ին:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրական գործընթացների ժողովրդավարացման, թափանցիկության և արդարության բարելավման նպատակով անհրաժեշտ է ԱՀ ընտրական օրենսդրության մեջ, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման և անցկացման պրակտիկայում ու մոտեցումներում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ընտրությունների վարչարարություն

- ուժեղացնել ԿԸՀ և ՏարԸՀ-ների կողմից իրականացվող վերահսկողությունը՝ ԱՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով խախտումները վերացնելու և հետագայում կանխելու նպատակով, ինչպես նաև՝ պատասխանատվության ենթարկել խախտում թույլ տված կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) և թեկնածուներին.
- ԿԸՀ պաշտոնական կայքում տեղադրել ամբողջական տեղեկատվություն ընտրական գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ապահովել տվյալների հրապարակման «բաց տվյալների» ձևաչափը.
- ձեռնարկել միջոցներ՝ թափանցիկ դարձնելու տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը, օրինակ՝ ԿԸՀ-ի կայքի համապատասխան բաժնում տեղադրելով դրանց նիստերի ժամանակացույցը, օրակարգը, արձանագրությունը, տեսաձայնագրությունները, որոշումները.

- իրականացնել պարբերական վերապատրաստում ՏարԸՀ անդամների համար՝ ապահովելով մասնագիտական զարգացում ու ստեղծելով պրոֆեսիոնալ աշխատելու համար համապատասխան մոտիվացիա.
- տեխնիկապես հագեցնել ՏարԸՀ-ները՝ ապահովելով համապատասխան սարքավորումների և ծրագրային միջոցների առկայություն՝ աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով.
- ՏԸՀ անդամների ստուգարքների համար կիրառել գրավոր թեստավորման մեխանիզմներ՝ հանձնաժողովի անդամների գիտելիքների վերաբերյալ համապարփակ պատկեր ստանալու և ստուգարքի գործընթացում կողմնակալության և հայեցողության ռիսկերը նվազեցնելու նպատակով.
- կազմակերպել քվեարկության գործընթացի համաժամանակյա հեռարձակում ավելի մեծ թվով տեղամասերում՝ ապահովելով հեռարձակման ավելի բարձր որակ.
- ապահովել տեղամասերի և, հնարավորության դեպքում, քարոզչական միջոցառումների անցկացման վայրերի հասանելիությունը և մատչելիությունը հաշմանդամություն և տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար.

Նախընտրական քարոզչություն

- դիտարկել ԱՀ ընտրական օրենսգրքում նախընտրական ժամանակահատվածից դուրս իրականացվող նախընտրական քարոզչության կանոնակարգման հնարավորությունը և համապատասխանեցումը նախընտրական ժամանակահատվածում գործող կարգավորումներին,[69] օրինակ՝ աշխատանքային օրերի/ժամերի, հանրային ծառայողների մասնակցության,[70] ուսումնական հաստատություններում քաղաքական գործունեության և քարոզչության[71] սահմանափակումներին և այլն.
- կազմակերպել ոչ թե միաժամանակ բոլոր թեկնածուների մասնակցությամբ մեկ նախընտրական բանավեճ, այլ մի քանի բանավեճեր, որոնցից յուրաքանչյուրը նվիրված կլինի կոնկրետ թեմայի կամ ոլորտի, իսկ վերջնական ամփոփիչ բանավեճը կազմակերպել երկու փուլով և քննարկումներին հատկացնել բավարար ժամանակ.
- եթերում թեկնածուների խոսքի մոնտաժման դեպքերում հանդես գալ հրապարակային պարզաբանմամբ՝ հաշվի առնելով, որ միայն որոշակի սահմանադրությամբ նախատեսված դեպքերում է ընդունելի խոսքի սահմանափակումը.
- խորությամբ և համակողմանիորեն ուսումնասիրել թեկնածուների կողմից կատարվող «բարեգործության» դեպքերը և ձեռնարկել միջոցներ խախտումները բացահայտելու և խախտողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

Վարչական ռեսուրս

- ընտրական օրենսդրությամբ սահմանել վարչական ռեսուրսի և դրա չարաշահման եզրույթները, ինչպես նաև հնարավորինս հստակեցնել ընտրական ողջ

[69] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19, մաս 2
[70] ԱՀ ընտրական օրենսգիրք, հոդված 19 մաս 5
[71] ԱՀ հանրակրթության մասին օրենք, հոդված 4, մաս 8

գործընթացում վարչական ռեսուրսների օրինական կիրառման ու չարաշահման սահմանագիծը.

- խստացնել վարչական ռեսուրսի օգտագործումը սահմանափակող օրենսդրական կարգավորումները և սահմանել համարժեք պատասխանատվության միջոցներ, ընդհուպ մինչև համապատասխան քաղաքական ուժի և տվյալ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելը.
- ներդնել և իրականացնել պատշաճ կրթական ծրագրեր՝ միտված հանրային ծառայողների իրազեկության բարձրացմանը վարչական ռեսուրսի և դրա չարաշահման ռիսկերի վերաբերյալ.

Քարոզչության ֆինանսավորում

- ընդլայնել հայտարարագրման ենթակա ծախսերի շրջանակը՝ ներառելով ընտրական շտաբների վարձակալությունը, այնտեղ աշխատող անձանց վարձատրությունը և կամավորների փոխհատուցումը, սոցիալական ցանցերով իրականացվող գովազդը, տրանսպորտային ծախսերը և վառելիքը, ինչպես նաև հնարավոր բոլոր այլ ծախսերը, որոնք կատարվում են նախընտրական քարոզչության ընթացքում և դրանց ֆինանսավորումը նախատեսել միայն նախընտրական հիմնադրամից.
- հայտարարագրի ձևում սահմանել ծառայությունների և ապրանքների հստակ դասակարգման պահանջ՝ ապահովելու ծախսերի կանոնակարգված վերահսկողություն ինչպես ՎՎԾ-ի, այնպես էլ՝ հանրության կողմից.
- հայտարարագրերում ներառվող անհատույց տրամադրվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ֆինանսական արժեքը գնահատելու համար սահմանել գնահատման մեթոդներ՝ ընդհանուր և համաչափ կիրառության համար.
- սահմանել պահանջ, որպեսզի իրականացվող ծախսերի առնվազն 90 տոկոսն իրականացվի անկանխիկ եղանակով.
- ԿԸՀ կայքում տեղադրել ոչ միայն ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և նախագահի թեկնածուների, այլև՝ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի թեկնածուների կողմից ՎՎԾ-ին ներկայացվող՝ նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի պատճենները.
- վերանայել ՎՎԾ-ի կազմավորումը և ինստիտուցիոնալ կապվածությունը ԿԸՀ-ի հետ՝ ապահովելու նրա անկախությունը, ինչպես նաև ընդլայնել ՎՎԾ-ի լիազորություններն ու գործիքակազմը՝ նախընտրական քարոզչության ֆինանսավորման լիարժեք, բովանդակային և արդյունավետ վերլուծությունների վրա հիմնված վերահսկողություն իրականացնելու համար.
- կուսակցությունների նախընտրական-ընտրական գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը հրապարակել բաց տվյալների (open data) և բաց աղբյուրի (open source) ձևաչափով՝ հասանելի դարձնելով դրանք շահագրգիռ կողմերին՝ ինքնուրույն վերահսկողության և վերլուծության համար.
- վերանայել օրենքի խախտումների համար պատասխանատվության շրջանակը և խստացնել պատժամիջոցները, այդ թվում՝ սահմանելով պատասխանատվություն հայտարարագրերի թերի կամ սխալ լրացման համար:

Հավելված 1. Ընտրողների մասնակցության և ընտրությունների արդյունքների վիճակագրության վերլուծություն

Սույն վերլուծությունը ԱՀ Ազգային ժողովի և նախագահի հերթական ընտրությունների քվեարկության ընթացքի և արդյունքների գնահատումն է՝ հիմնված ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած պաշտոնական տվյալների վրա:

Վերլուծության համար հիմք հանդիսացող հիպոթեզն այն է, որ 2020թ. կայացած ԱՀ ընտրություններում ընտրողների մասնակցությունը և թեկնածուների ու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստացած ձայները պայմանավորված չեն եղել արտաքին գործոններով, այսինքն՝ ընտրողների կամարտահայտումը եղել է ազատ և արտաքին ազդեցությունից զերծ: Նման «զրոյական» հիպոթեզը կարող է հաստատվել, եթե հետազոտությամբ պարզվի, որ ընտրողների մասնակցության միտումներում և մասնակցության ու քվեարկության արդյունքների միջև կորելացիաները բացակայում են:

Վերլուծության հիմքում այն սկզբունքն է, որ ընտրողների մասնակցությունը և կարծիքները սովորաբար բաշխվում են ըստ որոշակի վիճակագրական կանոնների և օրինաչափությունների, և ազատ ու արդար ընտրությունների պարագայում ստացվում են բացատրելի և կայուն պատկերներ: Ցանկացած արհեստական միջամտություն և ընտրակեղծարարություն, ինչպես օրինակ՝ լցոնում, մարդկանց տեղափոխում, կաշառում և ուղղորդում, բազմակի քվեարկություն, քվեարկության վերահսկում, արդյունքների փոփոխում և այլն հանգեցնում է տվյալների բաշխվածությունների ու կախվածությունների նկատելի աղավաղումների:

ԱՀ համապետական ընտրությունների քվեարկության և արդյունքների բաց տվյալների վերլուծությունը հերքում է սույն փաստաթղթի սկզբում ձևակերպված «զրոյական» հիպոթեզն՝ ըստ որի ընտրողների մասնակցության և թեկնածուների ու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստացած ձայների միջև նշանակալի դրական կորելացիա չկա և դրանք պայմանավորված չեն եղել արտաքին գործոններով:

Թե՛ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների), և թե՛ նախագահի թեկնածուների պարագայում, հատկապես առաջին փուլում, նկատվում են որոշակի անոմալիաներ, որոնք կարող էին ենթադրել արհեստական միջամտություն՝ բարձր մասնակցություն և ձայների անհրաժեշտ քանակ ապահովելու նպատակով:

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից Արցախի 2020թ. համապետական ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկման բացահայտումները թույլ են տալիս ենթադրել, որ նկատված անոմալիաները կարող էին լինել «բարեգործության» անվան տակ ընտրողների կաշառման, ուղղորդման և քվեարկության վերահսկողության հետևանք:

1. Ընտրողների մասնակցություն

2020թ. ԱԺ խորհրդարանական և նախագահական ընտրությունները կազմակերպելու նպատակով կազմավորվել է 8 ընտրատարածք՝ 281 ընտրատեղամասերով Արցախի տարածքում և մեկը՝ Երևան քաղաքում (ընդամենը՝ 282):[72] Ընտրողների ընդհանուր թիվը կազմում է ԱՀ բնակչության՝ 148,000-ի 70.8%-ը:[73]

2020 թվականի մարտի 31-ին ԱՀ համապետական ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրությունների համաձայն, ԱԺ ընտրություններին մասնակցել է 75,989 քաղաքացի, իսկ նախագահի ընտրություններին՝ 76,001 քաղաքացի: Այդպիսով, տվյալ օրը քվեարկությանը մասնակցել է ընտրողների ընդհանուր թվի՝ 104,866-ի մոտ 72.5%-ը:[74] Մասնակցության ամենաբարձր ցուցանիշը՝ 79% գրանցվել է 2-րդ ընտրատարածքում (Ասկերանի շրջան), իսկ ամենացածրը՝ 68%՝ 8-րդ ընտրատարածքում (Քաշաթաղի շրջան): Երևանի ընտրատեղամասում գրանցվել է 52% մասնակցություն:

2020 թվականի ապրիլի 14-ին կայացած ԱՀ նախագահի ընտրությունների երկրորդ փուլի քվեարկության արդյունքների համաձայն՝ ընտրողների թիվը կազմել է 104,748, իսկ քվեարկությանը մասնակցել է 47,165 քաղաքացի՝ ընտրողների 45%-ը: Արցախի տարածքում ամենաբարձր մասնակցությունը՝ 58%-ը գրանցվել է 3-րդ ընտրատարածքում (Հադրութի շրջան), իսկ ամենացածրը՝ 33%-ը Ստեփանակերտում: Երևանի ընտրատեղամասում մասնակցել է ընտրողների 23%-ը:

Գրաֆիկ 1. Ընտրողների մասնակցությունն՝ ըստ ընտրատարածքների



Ազատ և արդար ընտրություններին բնորոշ է քվեարկության օրվա ընթացքում ընտրողների համաչափ մասնակցությունը, ինչը գրաֆիկի վրա բաշխվում է նորմալ կորի տեսքով: Գրաֆիկ 2-ում պատկերված մասնակցության կորերն ակնհայտորեն հեռու են վիճակագրական

[72] Երևան քաղաքի ընտրատեղամասը սույն հետազոտության մեջ ներկայացվում է որպես թիվ 9 ընտրատարածք:
[73] Տվյալները վերցված են 2015թ. մարդահամարից. http://stat-nkr.am/hy/component/content/article/1043------2019
[74] http://cecnkr.am

նորմալ բաշխվածությամբ կորերից: Դրանք սիմետրիկ չեն, ունեն բազմաթիվ գագաթներ և թեքված են դեպի աջ, ինչը կարող է լինել մասնակցության վրա արհեստական գործոնների ազդեցության հետևանք:

2020 թվականի մարտի 31-ին ընտրողների մասնակցությունն առավոտից եղել է ակտիվ, և 11:00 դրությամբ 13 տեղամասերում արդեն իսկ նկատվել է 50% և բարձր (մեկ դեպքում՝ մինչև 100%) մասնակցություն:

Երկրորդ փուլում մասնակցությունը ևս սկսել է առավոտից: Մինչև ժամը 14:00-ը քվեարկել է քվեարկությանը մասնակցած ընտրողների 62%-ը: Երկրորդ փուլի արդյունքների կորը առաջինի կորից տարբերվում է նրանով, որ քվեարկությանը մասնակիցների թիվը մեծ է հատկապես ցածր մասնակցությամբ ընտրատեղամասերում: Սա պայմանավորված է Ստեփանակերտի՝ առավել մեծ ընտրատեղամասերի ընտրողների մասնակցության կտրուկ անկումով:

Գրաֆիկ 2. Ընտրողների մասնակցության դինամիկան քվեարկության օրվա ընթացքում



Վերոնշյալին զուգահեռ՝ ուշադրության է արժանի տեղամասերի մասնակցության վերլուծությունն՝ ըստ տեղամասերի քանակի: Ըստ գրաֆիկ 3-ի՝ մարտի 31-ին ընտրատեղամասերում մասնակցության բաշխվածությունը միջինում գրանցվել է 73%-ի չափով, որը մոտ է քվեարկության մասնակցության պաշտոնական ընդհանուր թվին՝ 72%-ին: Սովորական իրավիճակում մասնակցության հիստոգրամն ունենում է նորմալ

բաշխվածություն, այսինքն՝ կանոնավոր կորի տեսք՝ առանց ավելորդ գագաթների և ձգվածության: Համաձայն Կոլմոգորով-Սմիրնով և Շապիրո-Վիլկ[75] նորմալության ստուգման թեսթերի արդյունքների՝ մասնակցության բաշխվածությունն ըստ տեղամասերի քանակի նորմալ չէ: Ակնհայտ է, որ ներկայացված հիստոգրամը պոչային աջ հատվածում ունի նորմալությունից շեղվող գագաթներ, հատկապես՝ 76-78% և 80-82% մասնակցությամբ տեղամասերում (արձանագրվել է նմանատիպ 48 ընտրատեղամաս): Ընտրատեղամասերի միջին մասնակցային թվից ստանդարտ շեղումը մեծ է, ինչը նշանակում է, որ միջինից հեռու և, հատկապես, եզրային աջ հատվածում՝ բարձր մասնակցությամբ տեղամասերի քանակը մեծ է:

Այս համատեքստում՝ ուշադրության է արժանի քվեարկության արագության վերաբերյալ պաշտոնական տվյալների վերլուծությունը: Փաստացի, յուրաքանչյուր ընտրատեղամաս միավոր ժամանակահատվածում կարող է ֆիզիկապես ապահովել սահմանափակ թվով ընտրողների քվեարկություն՝ հաշվի առնելով, որ գոյություն ունի մեկ ընտրողի տեղամաս մտնելու և քվեարկելուց հետո տեղամասից դուրս գալու համար ծախսվող միջին նվազագույն ժամանակ:[76] Տեղամասի «թողունակությունը» կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են քվեարկության սենյակի մեծությունը, ստորագրությունների համար հատկացված սեղանները, քվեախցիկների քանակը: Հարկ է նկատել, որ Արցախում 2020թ. մարտի 31-ին քվեարկության նորմալ գործընթացը ընտրատեղամասերում «թողունակության» լրացուցիչ դանդաղում էր երկու տեսակի՝ խորհրդարանական և նախագահական ընտրությունների քվեարկության (քվեաթերթիկ ստանալը, լրացնելը և արկղը գցելը), ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի դեմ նախատեսված միջոցառումների իրականացման (դիմակի, ձեռնոցների, ալկոգելի, գրիչի բաշխում ընտրողներին) բերումով: Այս առումով, բավականին կասկածելի են ըստ ժամերի բարձր մասնակցության հրապարակված թվերը, որտեղ 83 ընտրատեղամասում մեկ անձի քվեարկությունը տեղի է ունեցել ավելի պակաս, քան 1.5 րոպեի (90 վրկ.) ընթացքում, ինչը քիչ հավանական է, իսկ 6 տեղամասում՝ ավելի պակաս, քան կես րոպեի (30 վրկ.) ընթացքում:[77] Նման թվերը կարող են նշանակել խմբային քվեարկություն, լցոնում, տվյալների կեղծում:

2020 թ. ապրիլի 14-ին ըստ ընտրատեղամասերի ամենահաճախը գրանցվել է 60-62% մասնակցություն, իսկ միջինում՝ 54%, մինչդեռ պաշտոնական ընդհանուր տվյալներով մասնակցությունը 45% է: Համաձայն նորմալության թեսթի արդյունքների՝ մասնակցության բաշխվածությունն ըստ տեղամասերի ավելի մոտ է նորմալ բաշխվածությանը, և թեև նկատվում է դեպի ձախ թեքվածություն, այն մոտ է 0-ի: Այդուհանդերձ՝ ստանդարտ շեղումը բարձր է, ինչը նշանակում է, որ մասնակցության թվերը միջին թվից հեռու են բաշված:

[75] Կոլմոգորով-Սմիրնով և Շապիրո-Վիլկ թեսթերը վիճակագրության մեջ լայնորեն կիրառվում են բաշխվածությունների նորմալությունը ստուգելու համար: Զրոյական հիպոթեզը նորմալ լինելն է, որը այս պարագայում մերժվել է 0.000 նշանակալիությամբ (Sig = 0.000<0.05):
[76] Բաժանելով ժամանակը տվյալ ժամանակահատվածում ընտրության մասնակիցների թվի վրա՝ ստացվում է քվեարկության արագությունը՝ վայրկյաններով:
[77] http://2020.electionscount.info/Artsakh/speed-Artsakh.php

Գրաֆիկ 1. Ընտրողների մասնակցությունն՝ ըստ տեղամասերի քանակի



2. Խորհրդարանական ընտրությունների արդյունքներ

ԱՀ Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքների համաձայն քաղաքական ուժերի ստացած քվեները բաշխվել են հետևյալ կերպ՝

- 39% - «Ազատ հայրենիք - ՔՄԴ» կուսակցությունների դաշինք
- 23% - «Միասնական հայրենիք» կուսակցություն
- 8% - Արցախի «Արդարություն» կուսակցություն
- 6% - «Հայ հեղափոխական դաշնակցություն»
- 6% - «Արցախի ժողովրդավարական կուսակցություն»
- 14% - բոլոր մնացածը, որոնք ստացել են 5 %-ից պակաս քվե և չեն անցել ԱՀ Ազգային ժողով:

Գրաֆիկ 4-ում ներկայացվում են ԱՀ խորհրդարանական ընտրությունների արդյունքներն՝ ըստ շրջանների: «Ազատ հայրենիք - ՔՄԴ» դաշինքն առավելագույն ձայները ստացել է Քաշաթաղում և Հադրութում, «Միասնական հայրենիքը»՝ Ստեփանակերտում և Մարտունու, Մարտակերտի ու Շուշիի շրջաններում, Արցախի «Արդարություն» կուսակցությունը՝ Ասկերանի շրջանում, «Հայ հեղափոխական դաշնակցությունը»՝ Մարտունու շրջանում, իսկ «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը»՝ Շահումյանի և Ասկերանի շրջաններում:[78]

[78] Տե՛ս՝ ԱՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում

Գրաֆիկ 4. Կուսակցությունների (դաշինքների) ընտրության արդյունքներն՝ ըստ ընտրատարածքների



Ըստ Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդի, որը կիրառվել է բազմաթիվ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ընտրություններում, արտաքին ազդեցությունների բացակայության դեպքում ընտրությունների մասնակիցների ստացած ձայների և տեղամասերում քվեարկողների մասնակցության մեջ կապը պետք է ունենա պաշտոնապես արձանագրված ձայների տոկոսի ուղիղ գծի շուրջ համախմբված «ամպիկների» տեսք: Գրաֆիկ 5-ում երևում է, որ «Ազատ հայրենիք - ՔՄԴ» դաշինքի դեպքում, ըստ Փիրսոնի կորելացիայի գործակցի[79], առկա է դրական նշանակալի (թեև ոչ ուժգին) կորելացիա կուսակցության ստացած ձայների և մասնակցության միջև: Այսինքն՝ որքան բարձր է տեղամասերում մասնակցության տոկոսը, այդքան ավելի շատ ձայն է հավաքել տվյալ կուսակցությունը: Մնացած կուսակցությունների դեպքում նշանակալի դրական կորելացիա չկա:

Գրաֆիկում կապույտ կետերի ցրվածությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԱՀ Ազգային ժողովի ընտրություններում ամենաշատ ձայներ հավաքած «Ազատ հայրենիք - ՔՄԴ» դաշինքի քվեների համամասնությունն՝ ըստ տեղամասերի, ունի միջինից (ուղիղ գծից) նկատելի շեղվածություն, այսինքն՝ ընտրողների կողմից տվյալ քաղաքական ուժի օգտին տրված քվեների համամասնությունը տեղամասից տեղամաս էականորեն տարբեր է:

[79] Փիրսոնի կորելացիայի գործակիցը 0.172** է: Կորելացիոն գործակիցը վիճակագրական ցուցանիշ է, որը ցույց է տալիս՝ ինչպես են փոփոխականները փոխկապված միմյանց հետ: Գործակցի բարձր ցուցանիշը (երբ այն ձգտում է +1.00-ի) ցույց է տալիս ուժգին ուղղակի կապ: Բացասական նշանի դեպքում գործում է ուժգին հակադարձ կապ: Զրոյի ձգտող գործակիցը ցույց է տալիս փոխկապակցվածության բացակայություն:

Գրաֆիկ 5. Կուսակցությունների (դաշինքների) ընտրության արդյունքներն՝ ըստ մասնակցության



Գրաֆիկ 6-ում ներկայացված՝ կուսակցությունների (դաշինքների) ստացած քվեների կորերը ցույց են տալիս, որ «Ազատ հայրենիք - ՔՄԴ» դաշինքի և «Միասնական հայրենիք» կուսակցության ստացած ձայների կորերը թեքվածություն ունեն դեպի աջ՝ ընտրատեղամասերում մասնակցության բարձրացմանը զուգընթաց, իսկ առաջինի ու մյուս քաղաքական ուժերի ձայների միջև տարբերությունը ևս մեծանում է կորի աջ հատվածում, այսինքն՝ բարձր մասնակցությանը զուգընթաց:

Գրաֆիկ 6. Կուսակցությունների ստացած քվեների թիվն՝ ըստ ընտրողների մասնակցության



3. Նախագահական ընտրությունների արդյունքներ

ԱՀ նախագահական ընտրությունները կայացել են երկու փուլով: Առաջին փուլում՝ 2020 թվականի մարտի 31-ին ընտրությունների քվեարկության արդյունքների համաձայն նախագահի թեկնածուների ստացած քվեները բաշխվել են հետևյալ կերպ՝

- 47% - Արայիկ Հարությունյան
- 25% - Մասիս Մայիլյան
- 14% - Վիտալի Բալասանյան
- 9% - բոլոր մնացածը:

Հաշվի առնելով, որ թեկնածուներից ոչ մեկը չի ստացել քվեարկությանը մասնակցող ընտրողների ձայների 50 %-ը, 2020 թվականի ապրիլի 14-ին նշանակվել է քվեարկության երկրորդ փուլ: Վերջինում Արայիկ Հարությունյանը ստացել է ձայների 88%-ի, իսկ Մասիս Մայիլյանը՝ 12%-ը:

Նախագահի թեկնածուների ձայների բաշխումը գրաֆիկ 7-ում ցույց է տալիս, որ քվեարկության առաջին փուլում Արայիկ Հարությունյանն առավելագույն ձայները ստացել է Քաշաթաղի, Շահումյանի և Հադրութի շրջաններում: Մասիս Մայիլյանը իր ստացած ձայների համեմատաբար ավելի մեծ մասը ստացել է Ստեփանակերտում, Մարտակերտում, Մարտունիում և Շուշիում, իսկ Վիտալի Բալասանյանը՝ Ասկերանում և Շուշիում:[80]

Երկրորդ փուլում Արայիկ Հարությունյանի ստացած ձայների համամասնությամբ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Ստեփանակերտում: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ Ստեփանակերտում ստացած քվեների բացարձակ թիվն առաջին փուլի համեմատ նվազել է 818-ով (8%-ով)՝ ի տարբերություն Արցախի մնացած ընտրատարածքների (բացառությամբ Երևանի), որտեղ տվյալ թեկնածուի ստացած ձայների բացարձակ թիվը նախորդ փուլի համեմատ ավելացել է: Երևանում ևս ստացած քվեների բացարձակ թիվը նվազել է 19-ով (45%-ով):

[80] http://cecnkr.am/wp-content/uploads/2020/01/%D5%86%D5%A1%D5%AD.-282-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BF%D5%BE%D5%B5%D5%A1%D5%AC%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE.pdf?fbclid=IwAR3LuVTNu95mIX04BLah9LNxCQbk8csMWAkygYsHEIbjT1xj0YOWdTFZe-Y

Գրաֆիկ 7. Նախագահի թեկնածուների ստացած քվեներն՝ ըստ շրջանների



Գրաֆիկ 8 ա)-ում կետերը ցույց են տալիս նախագահական ընտրությունների առաջին փուլում առաջատար երեք թեկնածուների ստացած ձայների բաշխումն՝ ըստ ընտրատարածքների: Գրաֆիկից ակնհայտ է, որ Ստեփանակերտի տեղամասերում (ընտրատարածք 1) առավել ձայներ ստացած երեք թեկնածուների դեպքում էլ, հիմնականում, դիտվում է միջինին մոտ մասնակցություն, որից կարելի է եզրակացնել, որ Ստեփանակերտում բնակչության ընտրությունը տեղամասերում ավելի համասեռ է: Մյուս շրջաններում թեկնածուների ստացած քվեների բաշխումը խիստ ցրված է և հեռու միջինից, ինչը, հատկապես, ցայտուն է արտահայտված Արայիկ Հարությունյանի պարագայում:

Գրաֆիկ 8 ա). Առաջին փուլում նախագահի թեկնածուների ընտրության արդյունքներն՝ ըստ ընտրատարածքների



Երկրորդ փուլում թեկնածուների ստացած քվեներն՝ ըստ տեղամասերի ներկայացված են Գրաֆիկ 8 բ)-ում: Ստեփանակերտի ընտրատարածքում միտումը նույնն է. շեղվածությունը միջինից փոքր է՝ ի տարբերություն մյուս ընտրատարածքների: Ինչպես և նշվել է վերևում, Ստեփանակերտի գրեթե բոլոր տեղամասերում Արայիկ Հարությունյանի ստացած քվեների բացարձակ թիվը երկրորդ փուլում նվազել է:

Գրաֆիկ 8 բ). Երկրորդ փուլում նախագահի թեկնածուների ընտրության արդյունքներն՝ ըստ ընտրատարածքների



Համաձայն նորմալության թեսթերի՝ ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուների ստացած քվեներն՝ ըստ տեղամասերի քանակի, նորմալ բաշխված չեն: Վիտալի Բալասանյանը և Մասիս Մայիլյանը տեղամասերից մեծամասնությունում ստացել են համապատասխանաբար 10-15%-ին և 25-30%-ին մոտ ձայներ, ինչը մոտ է թե՛ տեղամասային միջինին (համապատասխանաբար 12% և 22%), թե՛ պաշտոնական վերջնական արդյունքներին: Տեղամասային միջինից (51%) ստանդարտ շեղումն ամենաբարձրն է Արայիկ Հարությունյանի՝ ըստ տեղամասերի ստացած քվեների բաշխվածության կորի դեպքում: Պաշտոնական տվյալներով 47% ձայներ ստացած թեկնածուն ըստ տեղամասերի ամենահաճախը ստացել է քվեներ 40-45% միջակայքում:

Գրաֆիկ 9 ա). Առաջին փուլում նախագահի թեկնածուների ստացած քվեներն՝ ըստ տեղամասերի քանակի



Նորմալությունը ստուգող թեսթերի համաձայն՝ երկրորդ փուլում ևս Արայիկ Հարությունյանի՝ ըստ տեղամասերի ստացած քվեների համամասնության բաշխվածությունը նորմալ չէ: Գրաֆիկ 9 բ)-ից երևում է, որ միջինից շեղվածությունը բարձր է, իսկ կորի աջ պոչը իջնելու փոխարեն բարձրանում է:

Գրաֆիկ 9 բ). Երկրորդ փուլում նախագահի թեկնածուների ստացած քվեներն՝ ըստ տեղամասերի քանակի



Ինչպես արդեն նշվեց, ըստ Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդի՝ արտաքին միջամտությունից զերծ ընտրություններում մասնակցության և ստացած ձայների միջև չպետք է լինի փոխկապվածություն: Գրաֆիկ 10 ա)-ն փաստում է, որ նախագահական ընտրությունների

առաջին փուլում ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուի՝ Արայիկ Հարությունյանի (47%) պարագայում ունենք դրական նշանակալի կորելացիա: Փիրսոնի գործակցի արժեքը ցույց է տալիս, որ Արայիկ Հարությունյանի ստացած ձայների և տեղամասերում մասնակցության տոկոսի միջև կա վիճակագրորեն դրական, թեև ոչ ուժգին կորելացիա, իսկ մրցակից թեկնածուների՝ Մասիս Մայիլյանի (25%) և Վիտալի Բալասանյանի (14%) դեպքում ձայների և մասնակցության միջև նշանակալի կապ չկա:[81]

Գրաֆիկ 10 ա). Առաջին փուլում նախագահի թեկնածուների ընտրության արդյունքներն՝ ըստ մասնակցության



Ըստ գրաֆիկ 10 բ)-ի՝ նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ևս կա ոչ ուժգին, սակայն վիճակագրորեն նշանակալի դրական կորելացիա ամենաշատ ձայներ (85%) ստացած թեկնածուի տեղամասերում ստացած ձայների համամասնության և մասնակցության տոկոսի միջև[82]: Այսինքն՝ որքան մասնակցությունը տեղամասերում բարձր է, այնքան մեծ է Արայիկ Հարությունյանի օգտին քվեարկողների տոկոսը:

[81] Փիրսոնի կորելացիոն գործակիցներն են՝ Արայիկ Հարությունյան՝ 0.162**, Վիտալի Բալասանյան՝ 0.092, Մասիս Մայիլյան՝ -0.115:
[82] Փիրսոնի կորելացիոն գործակիցներն են՝ Արայիկ Հարությունյան՝ 0.202**, Մասիս Մայիլյան՝ -0.164:

Գրաֆիկ 10 բ). Երկրորդ փուլում նախագահի թեկնածուների ընտրությունների արդյունքներն՝ ըստ մասնակցության



Գրաֆիկ 11 ա)-ում ներկայացված է ԱՀ նախագահի թեկնածուների ստացած քվեների թիվն՝ ըստ մասնակցության՝ 5% քայլով: Ինչպես երևում է, բոլոր թեկնածուների ստացած ձայները ձախ հատվածում, այսինքն՝ ցածր մասնակցությամբ տեղամասերում, մոտ են, սակայն տարբերությունը առաջատար թեկնածուի՝ Արայիկ Հարությունյանի և մյուս թեկնածուների ստացած ձայների միջև մեծանում է հատկապես կորի աջ հատվածում, այսինքն՝ բարձր մասնակցությամբ տեղամասերում:

Գրաֆիկ 11 ա). Առաջին փուլի ընտրություններում նախագահի թեկնածուների ստացած քվեների քանակն՝ ըստ մասնակցության



Ըստ Գրաֆիկ 11 բ)-ում պատկերված՝ երկրորդ փուլի ընտրություններում Արայիկ Հարությունյանի՝ ըստ մասնակցության ստացած ձայների կորը սիմետրիկ չէ և ունի բազմաթիվ գագաթներ: Մասիս Մայիլյանի ստացած ձայների կորը տափակ է, հնարավոր է՝

պայմանավորված իր ընտրողների ուղղված՝ ընտրությունների երկրորդ փուլը բոյկոտելու կոչով:

Գրաֆիկ 11 բ). Երկրորդ փուլի ընտրություններում նախագահի թեկնածուների ստացած քվեների քանակն՝ ըստ մասնակցության



ԱՀ համապետական ընտրությունների քվեարկության և արդյունքների բաց տվյալների վերլուծությունը հերքում է սույն հավելվածի սկզբում ձևակերպված «զրոյական» հիպոթեզն՝ ըստ որի ընտրողների մասնակցության և թեկնածուների ու կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստացած ձայների միջև նշանակալի դրական կորելացիա չկա և դրանք պայմանավորված չեն եղել արտաքին գործոններով:

Թե՛ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների), և թե՛ նախագահի թեկնածուների պարագայում, հատկապես առաջին փուլում, նկատվում են որոշակի անոմալիաներ, որոնք կարող էին ենթադրել արհեստական միջամտություն՝ բարձր մասնակցություն և ձայների անհրաժեշտ քանակ ապահովելու նպատակով:

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից Արցախի 2020թ. համապետական ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկման բացահայտումները թույլ են տալիս ենթադրել, որ նկատված անոմալիաները կարող էին լինել «բարեգործության» անվան տակ ընտրողների կաշառման, ուղղորդման և քվեարկության վերահսկողության հետևանք: